

ՄԱՐԶԻԿ

հսլս

Մարզիկ

مجلة رياضية شهرية

تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

հօ. ՏԱԻԻ, 2007, ԹԻԻ 5-6 (299-300) VOL. XXVI N°5-6

السنة السادسة والعشرون العدد الخامس - السادس




ՓԱՌԱՀԵՂ ՏՈՂԱՆՅՔ
ՀԱԼԷՊԻ ՄԷՋ



ԹԻՒՆԻՆ ՆԻՒԹԵՐՈՂ

MARZIG SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN
 ماززيك مجلة رياضية شهرية تصدرها جمعية الهومنتمن الرياضي



Մարզական ամսաթերթ
 Հրատարակություն՝ Հ.Մ.Բ.Մ.ի
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
 Ի.Ձ. ՏԱՐԻ, 2007, ԹԻԻ 5-6 (299-300)

ԽՄԲԱԳԻՐ
 Վիզեն Աւագեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆԿԱՄ
 Սեդա Պէշլեան

«ՄԱՐԶԻԿ»Ի ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ
 Արթուր Մոսիկեան
 Գօգօ Մկրտիչեան

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ
 Շահան Եսյւ. Սարգիսեան,
 Պետրոս Հաճեան, Յակոբ
 Կարապետեան, Սարքի Լատոյեան
 և շրջաններու թղթակիցներ:

Էջադրում - Ջարեհ Չօրէքճեան
 Գրաշարութիւն - Վերա Բարսեղեան
 Colour Separation - Photogravure Paklayan
 Կողքի Ձեւադրում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՅԷ
 Պուրճ Համուտ, Ճիհիշեանի Թաղ
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117
 E-mail: marzig@homenetmen.org
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՅՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին
 հատավաճառի սակն է 3000 լ.ն.:
 Տարեկան բաժանորդագրութեան
 սակ ձըղուած է 35000 լ.ն.:
 Լիբանանէն դուրս թերթին
 բաժանորդագրութիւնը
 կը կատարեն Հ.Մ.Բ.Մ.ի Մեկուսի
 և Շրջանային Վարչութիւնները:
 Թերթը ուղղակի Լիբանանէն
 կը ստացուի անձնական
 բաժանորդագրութեամբ
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան
 և Եւրոպական երկիրներ \$50,
 Ամերիկա և Աւստրալիա՝ \$55):



16

Հ.Մ.Բ.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Խմբագրական 2
- Հ.Մ.Բ.Մ.ի Հետ 3
- Մեր Տեսակցութիւնները 5
- Յուշեր 7
- Մասնաճիւղի Մասնաճիւղ 12



26



19

ԲԱԺԻՆՆԵՐ

- Սկաուտական 10
- Մանկապատանեկան 38
- Տարբեր Հայեացքով 40



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Ա Ր Ժ Ե Ք

ԱՌԱՆՉԻՆ ԱՐԺԵՔ

Արժեքները մահ չունին: Ամեն մարդ իր մէջ բնական մղում մը կը պզգայ արժեք մը ներկայացնելու, իրականացնելու, որովհետեւ անոր մէջ կը գտնուի իր կեանքին իմաստը, գոհունակութիւնը, ապրելու իրաւունքը:

Արժեքներու շարքին կարելոր տեղ վերապահուած է նկարագրիին: Մարդկային մշակոյթը չի վարանիր անոր տալ նոյնիսկ շարքին առաջին տեղը, որովհետեւ նկարագիրը իր մէջ կը խտացնէ պնդի սկզբունքներով ուժեղ անհատականութիւն, գաղափարականի տէր հոգի եւ տեսարար լաւին ձգտող կամք: Ան կը լրացնէ յառաջդիմութեան եւ բարձրացումի ամենէն անհրաժեշտ պայմանները՝ ներքին միութիւն եւ կեդրոնացում:

Գիտութիւն, արուեստ եւ արհեստ կը նսեմանան նկարագրիին քով: Միասին՝ մեծարժեք են: Առանձին՝ վնասակար:

Գեղեցիկ եւ օգտակար են բնական գիտութիւնները, սակայն անոնք կը ճրպմեն մարդը, երբ ան իր մէջ չունի հակակշիռը՝ նկարագրի ուժը: Կեանքի պայմանները կը բարելաւուին, հաճոյքները կը բազմապատկուին ու աւելի մատչելի կը դառնան գիտութեամբ եւ ճարտարարուեստով, բայց կը դիւրանայ նաեւ վատասերումը: Եթէ նկարագրի ուժով մարդ իր ներսը բնակող գազանը չէ սանձած, եթէ չէ իւրացուցած անձնապոհ ու անշահախնդիր մարդասիրութիւն, գիտութիւնը եւ ճարտարարուեստը տեսականօրէն կը շինեն, կը բարձրացնեն, բայց գործնականօրէն կը քանդեն ու մահ կը սփռեն:

Իսկ ո՞ւր է այս բոյրէն մերօրեայ երիտասարդութիւնը: Հ.Մ.Ը.Մ.ի նման երիտասարդական կազմակերպութիւն մը ինքզինքին թոյլ կու տայ նման հարցում մը հարցնելու:

Կար ժամանակ, երբ երիտասարդ ըլլալ կը նշանակէր ըլլալ դեռատի, նորածիլ, կարօտ՝ առաջնորդի, ղեկավարի: Այսօր այդպէս չէ ընդհանրապէս: Մեր օրե-

րուն ո՞վ կրնայ համարձակիլ դաս տալ երիտասարդներուն: Այսօրուան երիտասարդը ի՞նք կ'որոշէ իր մտատիպարը, արժեքներն ու բարոյականը: Անհաշտ կռիւ կը մղէ ան ամէն հեղինակութեան դէմ, որ կը յանդգնի չափ ու սահման դնել իր ապատութիւններուն, հաճոյքներուն, սիրոյն եւ ատելութեան:

Իսկ ո՞ւր է փրկութեան ճանապարհը: Ակնարկները կ'որոշուին Հ.Մ.Ը.Մ.ին: Հաւատարիմ իր կոչումին եւ դաւանանքին, երդումին եւ նշանաբանին, Հ.Մ.Ը.Մ. ունի երիտասարդութեան պատշաճող յարմար միջոցները՝ անոնց քայլերը ուղղելու դէպի բարձունքը իսկական նկարագրի: Երիտասարդին ոչ մէկ կարիքը անտեսուած է Հ.Մ.Ը.Մ.ական դաստիարակութեան մէջ: Մարմին ու հոգի, կամք ու միտք, սիրտ ու խիղճ ներդաշնականօրէն ձեռք-ձեռքի տուած կը պարզանան: Կրօն եւ բարոյական էական տեղ կը գրաւեն իբրեւ գերագոյն արժեքներ, ապա կը յաջորդեն արժեքներու սանդուխի մնացեալ աստիճանները. ապգ եւ հայրենիք, ընտանիք եւ ընկեր:

Հ.Մ.Ը.Մ. կը կրթէ, կը կերտէ ամենապարզ ու գործնական ձեւերով: Կեանք ու գործ, բնութիւն եւ ճարպիկութիւն, խաղ ու վազք միջոցներ են, որոնք լայն ասպարէզ կու տան պատանիներուն՝ պանոնք մղելով բարձրագոյն արժեքներ իրականացնելու:

Հ.Մ.Ը.Մ.ական կրթութիւն ստացողները լաւագոյն ճամբու մէջ են հասնելու ճշմարիտ նկարագրի: Անոնց կը սպասեն ընտանիք եւ հայրենիք, պետութիւն եւ մարդկութիւն:

Անոնք չեն ծերանար ժամանակէն առաջ՝ ինչպէս մեղկ ու անդիմազիծ երիտասարդները: Իսկ երբ ծերանան, չափահասութեան համեղ պտուղները տալէ ետք, իրենց երիտասարդական ուժը կը պայծառակերպուի ու կը փայլի իբրեւ հասուն իմաստութիւն:

Այս ինքնին առանձին արժեք մըն է արդէն:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՈԳԻՆ

Շահան Եպս. Սարգիսեան
Առաջնորդ Հայոց Բերիոյ Թեմին
ՀԱԼԷՊ*

Հայ ժողովուրդի սպառնացող մարտահրաւէրներուն եւ տագնապներուն դիմաց, ցեղային իւրայատուկ ու բացառիկ յատկանիշ է ինքնակերտումի եւ վերակազմակերպման շնորհքը, որ արտայայտչական տարբեր ձեւերով ինքզինք կ'իրագործէ եւ հաւաքականութեան մը փրկութեան ճամբան կը բանայ: Վերոյիշեալ մտածումին կամ տեսութեան վաւերականութեան ապացոյցներէն մէկը կարելի է նկատել Հայկական սկստութեան ծնունդը եւ Հ.Մ.Ը.Մ.Ի ստեղծումն ու գոյառումը Կ. Պոլսոյ մէջ (1912 եւ 1918):

Հայկական Յեղասպանութեան եւ անոր ծանրագոյն հետեւանքներու շրջանին, ինչպէս նաեւ Հայաստանի Հանրապետութեան հռչակման ընկերակցող անասելի վերիվայրումներուն ընթացքին, նոր սերունդին ազգային առողջ դաստիարակութիւն ջամբելու առաջադրութեամբ յառաջացած, համընդհանուր շարժումով ու մասնակցութեամբ իրականացած Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը, որուն երթը մէկ դարու վերելքով մը արժեւորուած է, հաւատարիմ եղաւ «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր»ի համամարդկային ու խորապէս ազգային գաղափարականին:

Յետագարձ ակնարկով մը, երբ ժամանակի հեռաւորութեան մէջէն կը նայինք Հ.Մ.Ը.Մ.Ի սկստական շարժման ծաւալած գործունէութեան, թուաբանական հաշուարկումով մը կ'անդրադառնանք այն ճշմարտութեան, որ միութիւնը կը զարգանայ երկու ուղղութեամբ՝ հայրենիքին մէջ ան կը վերընձիւղուի, ու համաշխարհային շափանիչով գրեթէ «ամէն տեղ ուր որ հայ կայ» մասնաճիւղ մը կը հաստատուի, գերազանցելով իր իսկ տարիներուն թիւը: Ի տես այս երեւոյթին՝ անպայման կը տարուինք մտածելու, թէ այս բարգաւաճումը արդիւնքն է կամ կը պարտինք մէկ կողմէ Հ.Մ.Ը.Մ.Ի ներքին ուժականութեան, հաւատքին ու հաւատամքին, հրաշալի կառոյցին՝ եղբայրութեան ու եղբայրական-բրոնջական սիրոյ, միւս կողմէ անոր հաւատաւորներուն, բայց մանաւանդ՝ մեր ժողովուրդի լայն զանգուածներուն Հ.Մ.Ը.Մ.Ի նկատմամբ ունեցած անհուն սիրոյ, վստահութեան ու գնահատանքին:



Անհուն ուրախութեամբ կը շնորհաւորենք Հ.Մ.Ը.Մ.՝ երկար տարիներու իր թաւալումին մէջ իրագործած իսկապէս հպարտացնող ձեռքբերումներուն համար՝ մըջնիկներէն մինչեւ երիցագոյն պատասխանատուները, եւ ճիշդ այդ պատճառով ալ մեր ժողովուրդի սպասումներուն, հաւանաբար նաեւ պահանջներուն թելադրութեամբ թարգմանը կը փորձենք ըլլալ, եւ մարտահրաւէրի պէս կը հնչեցնենք, մասնաւորաբար ու յատկապէս Սուրբոյ Հ.Մ.Ը.Մ.ի սկառուտական շարժումին, որ նոր ժամանակներուն գոյատեւելու կամ արժանաւորութեամբ ապրելու համար անհրաժեշտ է:-

ա) Ինքզինք վերանորոգել, անցեալի փառաւոր գործունէութեան անդրադարձով մը, բայց ներկային համապատասխանող վերակազմակերպումի տեսլականով:

բ) Կարգապահութիւնն ու պատրաստակամութիւնը դրսե-

ւորել մեծ ու փոքր ծրագիրներու մշակումին մէջ, բայց մանաւանդ զանոնք իրագործելու ընթացքին:

գ) Համայնական կեանքի լուսանցքէն ներս, նոյնիսկ մայր էջին վրայ, ինչպէս անցեալին ու միշտ, դրոշմել մարդկային ու հայկական ազնուագոյն խտէյներով թէ նկարագիրով թրծուած նոր սերունդի մեծատարած ներկայութիւն մը:

դ) Հայկական ազգային ու հոգեւոր-եկեղեցական արժէքներու նկատմամբ սէրը, գուրգուրանքն ու կապուածութիւնը արտայայտել ամէնօրեայ կեանքին ու գործունէութեան մէջ:

Այս ակնկալութեամբ ու օրհնութեամբ բարձրօրէն կը գնահատենք հարիւրամեայ միշտ երիտասարդ ու երիտասարդացնող, Հ.Մ.Ը.Մ.ի ոգիով երթը շարունակող քոյրերն ու եղբայրները եւ զանոնք կը դնենք Ամենակալի հովանաւորութեան ներքեւ, որպէսզի ընդմիշտ ապրին սիրոյ գիտակցութեամբ եւ անձնուիրաբար ծառայեն մեր ժողովուրդին, Սփիւռքի թէ Հայրենիքի մէջ:

ՎՐԻՊԱԿ

Եղբ. Յովհաննէս Շահինեանի նուիրում մեր անցեալ թիւի յօդուածին մէջ (էջ 3-5), ցաւալի վրիպակով մը տեղ տրուած էր եղբ. Նշան Թիւսիզեանի նկարներուն:

Վրիպումին համար կ'ապաւինինք մեր ընթերցողներուն ներողամտութեան:

*Բարեջան Առաջնորդին այս գրութիւնը լոյս տեսած է «Հայ Սկառուտի Օր»ուան առիթով Հ.Մ.Ը.Մ.ի Սուրբոյ Շրջանային Սկառուտ. Խորհուրդին հրատարակած գրքոյկին մէջ, իբրեւ Հայրական ողջոյնի խօսք:

FREDDY KARAGEUZIAN

"ONNIG OF CAIRO"
Egyptian Museum

Tahrir Square - Cairo

Tel: 7730065 Fax: 5081613 E-mail: freddy@gega.net

Հ.Մ.Ը.Մ.Ը ԻՆՏԻ ՏԻՄԻՓԼԻՆԻ, ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՀԱՍԿԱՅՈՂՈՒԹԻՒՆ ՏՈՒԱԾ Է

«ՄԱՐԶԻԿ»ԻՆ Կ'ԸՍԷ ՊԱՍՔԵԹՊՈՒԼԻ ԱՆՑԵԱԼԻ
ԱՍՏՂԵՐԷՆ՝ ՔՈՅՐ ՄԱՐԻ ՄԱՐԵԱՆ-ՀԱԼԷՊԼԵԱՆ

Քոյր Մարի Սարեան-Հալեպլեան անուն-մականունը նոր սերունդին համար կրնայ անձանօք թուիլ, ինչպես կը ծանօթացնէք դուք ձեզ:

-Անոնք որոնք լիբանանեան պասքեթպոլի անցեալին ծանօթ են՝ կրնան անունս լսած ըլլալ: Քոյր Մարի, Հ.Մ.Ը.Մ.Ի աղջկանց ներկայացուցչական խումբին թիւ ութն, լիբանանեան պասքեթպոլի դաշտերուն վրայ եղած եմ աւելի քան 20 տարի՝ 1946-1969, Հ.Մ.Ը.Մ.ին ապահովելով բազմաթիւ յաղթանակներ: 1975էն ի վեր կ'ապրիմ Մ. Նահանգներ եւ հոգ-ւով-սրտով կը մնամ Հ.Մ.Ը.Մ.ական:

Ե՞րբ եւ ի՞նչպէս մաս կազմած էք Հ.Մ.Ը.Մ.ին:

-Հ.Մ.Ը.Մ.ին անդամակցութիւնս եղած է սկաուտութեան ճամբով: Դամասկոսի մէջ, ուր մանկութեանս տարիները անցուցած եմ, տարի մը եղած եմ Օգնութեան Խաչի արծուիկ: Այդ օրերուն, 1940ականներու սկիզբը, սկաուտութիւնը աղջկանց բաժին չունէր եւ արծուիկներն ու արենոյշները մաս



1956. Լիբանանի եօթը անգամ ախոյեան՝ Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի աղջկանց պասքեթպոլի խումբը: Քոյր Մարի աջէն երկրորդը:

կը կազմէին Օգնութեան Խաչին: Այդ պատճառով ալ ես մաս կազմած եմ Օգնութեան Խաչի արծուիկներու խումբին: Մեր խմբապետուհին Աստղիկ Պետրոսեանն էր:

Յետոյ, 1945ին երբ Պէյրութ փոխադրուեցանք, մինչեւ նշանուիս եղայ Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղի արենոյշներու պատասխանատու: Երբ նշանուեցայ՝ պաշտօնս փոխանցեցի քոյր Արաքս Շիմշիրեանին (այժմ Գուլաճեան) եւ սկաուտական կեանքին հրաժեշտ տուի:

Իսկ ի՞նչպէս մուտք գործած էք պասքեթպոլի աշխարհ:

-1946ին, 19 տարեկանիս, լուսահոգի եղբ. Յակոբ Գատեանը երբ խաղարկութիւնս տեսաւ, ըստ երեւոյթին որոշ կարողութիւն մը նկատեց մէջս: Ան ինծի թելադրեց ներկայացուցչական խումբի փորձերուն օրը դաշտ գալ, փորձերէն կէս ժամ առաջ: Հետեւաբար, շաբաթը երկու օր՝ Երեքշաբթի եւ Հինգ-



1947. Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի աղջկանց պասքեթպոլի խումբը Հալեպի միջ-մասնաճիւղային խաղերուն:

շաբթի օրերը ես առանձին փորձեր կատարեցի եւ 6 ամիսէն ներկայացուցչական խումբին մաս կազմեցի:

Որո՞նք կը յիշէք ձեր սերնդակիցներէն:

-Մեր խումբին մաս կը կազմէին Սալբի Իփէկեանը, Արփի-նէ Թիւթիւնճեանը, Էլիզ Շաղուպեանը, Գարմէն Գաղթացեանը (Աեւոն Շանթին հարսը, տղուն կինը) եւ ուրիշներ:

Անշուշտ, 1946-1969՝ խումբը քանի մը սերունդ ճանչցած պէտք է ըլլայ, հաւանաբար ուրիշներ եւս մաս կազմած պէտք է ըլլան ներկայացուցչական խումբին: Այլ անուններ եւս չե՞ք յիշեր:

-... Սեդա Սարեանը կար, Անահիտ եւ Աստղիկ Տէր Կարապետեանները կային: Չմոռնամ նաեւ Էլօ Տէր Մելքոնեանը, Էլօ Արահայտոյեանը, Հուրի Շահինեանը եւ ուրիշներ:

Յայտնեմ, որ այդ շրջանին Հ.Մ.Ը.Մ-ի խաղացողներուն մեծ մասը կը գար Ճեմարանի խումբերէն:

Ի՞նչպէս կարողացաք հասնիլ յաջողութիւններու գագաթնակէտին՝ Լիբանանի ախոյեանութեան յաջորդական տիտղոսներուն:

-Յարատեւ ջանքով, աշխատանքով եւ մեր պատասխանատուներուն խօսքերը մտիկ ընելով: Ունէինք աննման մարզիչ մը՝ եղբ. Գատեանը, որուն կը յարգէինք մեծապէս: Անգամ մը, չեմ մոռնար, դաշտին կէսէն քայլ մը առած, գնդակը բռնեցի եւ ուղղակի՝ դէպի կողով նետեցի: Եղբ. Գատեանը «հ՛չ» պոռաց: «Կոթը կերանք» ըսի, եթէ գնդակը չմտնէ, է՛շ եղանք: Բարեբախտաբար, գնդակը գնաց եւ մտավ: Ինքզինքս շուտով հաւաքեցի եւ աչքիս տակէն տեսայ որ ան հանգչած էր:

Մեր մրցակիցները կը գարմանային թէ մենք ի՞նչպէս կը յաղթէինք: Մեր խումբին յաղթանակներուն գաղտնիքը մեր խմբային խաղարկութիւնն էր: Մեր մէջ անձնական խաղ խաղացող չկար: Բոլորս համերաշխ էինք իրարու հետ:

Դուք նաեւ Լիբանանի ազգային խումբին մաս կազմած էք՝ ի՞նչ կրնաք ըսել այդ մասին:

-Ճի՛շդ է, ես մաս կազմած եմ Լիբանանի ազգային խումբին եւ շրջան մըն ալ եղած եմ խումբին խմբապետուհին: Խումբին հետ ես եւ Անահիտ Տէր Կարապետեանը մեկնած ենք



ԾԱՆՕԹԱՅՍԱՆ ԱՆԳԱՍՏՔԱՐՏ



Լիբանանեան պասքէթպոլի 1950-1960-ական տարիներու Հ.Մ.Ը.Մ.ական աստղերէն քոյր Մարի Սարեան-Հալէպեան ծնած է 1927ին, Կիպրոս: Մանկութիւնը ապրած է Դամասկոսի մէջ, ուր տարի մը եղած է արժուիկ:

1945ին Լիբանան փոխադրուելով, քոյր Մարի մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ-ի Պէլրոսի մասնաճիւղին եւ կը նշանակուի արեւոյշներու պատասխանատու: 1946ին, եղբ. Յակոբ Գատեանի կողմէ ան կը հրաւիրուի Հ.Մ.Ը.Մ-ի պասքէթպոլի ներկայացուցչական խումբ, որուն շապիկը արժանաւոր կերպով կը կրէ մինչեւ 1969: Միաժամանակ, ան մաս կը կազմէ պասքէթպոլի Լիբանանի ազգային խումբին:

Հ.Մ.Ը.Մ-ի աղջկանց ներկայացուցչական խումբին հետ, քոյր Մարի յաջորդաբար եօթը տարի՝ 1950-1957 կը տիրանայ Լիբանանի ախոյեանութեան տիտղոսին:

1969ին ան կը պսակուի Յարութիւն Հալէպեանի հետ եւ 1975ին կը հաստատուի Մ. Նահանգներ, Հոլիվուտ: 1990ին կը փոխադրուի Փասատինաս, ուր կը մնայ մինչեւ օրս:

Քոյր Մարի 1975էն ի վեր անդամ է Հ.Մ.Ը.Մ-ի Հոլիվուտի մասնաճիւղին:

Վարչաւիա, ուր ունեցած ենք մրցումներ: Առիթով մըն ալ, տեղական «Ռենեսանս» խումբը Եգիպտոսի մէջ մրցում ունէր, զիս Հ.Մ.Ը.Մ-էն փոխ առնելով՝ Գահիրէ տարաւ: Հոն ալ մրցումներ կատարեցի:

Անշուշտ, այդ տարիներուն Հ.Մ.Ը.Մ-ի հետ մասնակցած եմ Հալէպի միջ-մասնաճիւղային բոլոր խաղերուն:

Հ.Մ.Ը.Մ-ը ի՞նչ տուած է ձեզի:

-Հ.Մ.Ը.Մ-ը կերտած է նկարագիրս: Նախ՝ ինծի սուտ չիօսիլ սորվեցուցած է: Սորվեցուցած է նաեւ դիմացինը յարգել եւ մտիկ ընել գիտնալ: Հ.Մ.Ը.Մ-ը ինծի ճիշդ ճամբով առաջնորդած է: Ամէնէն կարեւորը՝ ինծի տիտղոսի, կարգապահութեան հասկացողութիւն տուած է: Բան մը, որուն կարիքը շատ ունինք այս օրերուն:

Թէեւ տարիներ անցած են միութենական գործունէութենէս, սակայն ես կը մնամ Հ.Մ.Ը.Մ-ական, Հ.Մ.Ը.Մ-ի Հոլիվուտի մասնաճիւղի անգամ եմ եւ նոր սերունդի ծնողներուն կը թելադրեմ իրենց զաւակները վստահիլ Հ.Մ.Ը.Մ-ին:

ՀՆՕՐԵԱՅ ԵՒ ՄԵՐՕՐԵԱՅ Հ.Մ.Ը.Մ.



ՅՈՒԹՊՈՒԼԻ ՏՕՆԱԿԱՆ ՄՐՅՈՒՄ ՄԵ

Պետրոս Հաճեան
ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԷՍ

Ամէն անգամ որ «Մարգիկ»ի գեղատիպ ու պատկերազարդ էջերը թղթատեմ, կ'անդրադառնամ, որ մենք՝ «Հնօրեայ Հ.Մ.Ը.Մ.ականներս», եթէ սրտազողով ու ափսոսանքով կը վերջիչենք այս կազմակերպութեան դրօշին ներքեւ մեր ապրած պատանեկան օրերը, ապա Շաւարշ Քրիսեաններու աւանդով մարմին առած միութիւնը կը շարունակէ նոյն ոգին ու նոյն ապրումները փոխանցել մերօրեայ հայ պատանիներուն, երիտասարդներուն, սկառտաներուն, մարգիկներուն, գայլիկներուն, արծուիկներուն թէ արեւոյշներուն:

Մենք՝ «Հնօրեայ Հ.Մ.Ը.Մ.ականներս» ծերացած ենք արդէն, մինչ մեզի կամք, ծառայասիրութիւն, հայրենիքի ու գաղափարի հանդէպ հաւատարմութիւն ներշնչող միութիւնը երիտասարդ կը մնայ, աւելի քան երբեք, եւ կը շարունակէ ազգային ու մարդկայնական նոյն արժէքները սերմանել սրտին մէջ մերօրեայ աշխարհի բոլոր այն հայորդիներուն, որոնք կ'ապրին Սուրիա կամ Լիբանան, Գանատա, Քուէյթ կամ Ֆրանսա, Արժանթին, Յորդանան, Յունաստան կամ Աւստրալիա: Ո՛ր որ ըլլայ եւ ո՛ր երկրի մէջ ալ ապրին անոնք:

«Ուր որ երկու հայ կ'ապրի, մէկը անպայման Հ.Մ.Ը.Մ.ական է, եւ Հ.Մ.Ը.Մ.ականը ա՛ն է, որ մինչեւ մահ հայ

կը մնայ», ըսած է «Հնօրեայ» Հ.Մ.Ը.Մ.ական մը՝ Եղիշէ Մանուկեան, քառասունական թուականներուն, Ճարապուս կոչուող անշուք գիւղաքաղաքի մը աւելի քան անշուք խրճիթի մը մէջ, ուր հաւաքուած էին քանի մը տասնեակ մանուկներ եւ պատանիներ, որոնց մէջ՝ այս տողերը ստորագրողը:

Այդ օրէն ասդին, Հ.Մ.Ը.Մ.ի ջահէն կայծ մը ինկաւ մեր սրտին մէջ: Այդ կայծը բռնկուն կը պահէ մեր պաշտամունքը հանդէպ ամէն երեւոյթի եւ շարժումի, որ հայածին է ու հայաբոյր, որ հայաշունչ է ու հայաբարբառ: Կը հաւատամ՝ մինչեւ մահ, ինչպէս պատգամած է Եղիշէ Մանուկեան:

Անկարելի է սեփական յիշողութենէ ջնջել այն քաղցր ու թախծոտ պահերը, այն յուզիչ, հպարտառիթ կամ տրտմառիթ դէպքերը, որոնք արձանագրուած են հոն, իբրեւ գայլիկ կամ սկառտ, իբրեւ մարգիկ կամ վարչական անդամ՝ Հ.Մ.Ը.Մ.ի շարքերուն մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի հաւաքական կենսագրութեան մէջ:

Քառասունական այդ նոյն թուականներուն, ես եւ քանի մը դասընկերներ՝ Ճորճ Թաշճեան, Միսաք Պաղտասարեան, Սարգիս Պալապանեան, Ներսէս Ղազարեան եւ Յակոբ Ինճէ-արապեան, քանի մը սկառտ ընկերներ՝ Գէորդ Պետիրեան, Յարութիւն Ղազարեան, Լեւոն Ղազարեան, սկառտական շարքերէն անցնելով մտած էինք Հ.Մ.Ը.Մ.ի Փութպոլի առաջին կազմին մէջ եւ կը մարզուէինք Սարգիս Պալապանեանի (երէց) հսկողութեան տակ:

Ապրիլ, 1948:
Սուրբոյ ազատագրութեան առաջին տարեդարձին առիթով, Իյտ էլ ձեյէ, Ճարապուսի քայմաքամը որոշած էր մաս-



1947. Հ.Մ.Ը.Մ.ի Ճարապլուսի եւ Ազգի ֆութպոլի խումբերը
Հալէպի միջ-մասնաճիւղային խաղերուն:
(Նկարը՝ Սարգիս Պալապանեանի)

նաև որ հանդիսութեամբ մը նշել երկրին անկախութեան նուաճումը եւ այս առթիւ կազմակերպած էր ֆութպոլի մրցում մը ընդմէջ մեր խումբին եւ պարագայաբար կազմուած խումբի մը, որուն մէջ կեդրոնական դեր ունէր Փրանսական բանակէն սուրիականին անցած արաբ ենթասպայ մը, որ ֆութպոլի հանդէպ ունէր մեծ սէր ու հակում եւ յաճախ կը մասնակցէր մեր փորձերուն, մեր դաշտին մէջ: Արդէն ուրիշ դաշտ չկար, իսկ համեմատաբար մեզի՝ ենթասպային խաղընկեր արաբ երիտասարդները ընդհանրապէս անփորձ ու անվարժ ֆութպոլիստներ էին:

Մրցումին օրը մեծ բազմութիւն մը հաւաքուած էր դաշտին շուրջ: Կարծես ճարապլուսի ամբողջ բնակչութիւնը եկած էր ներկայ ըլլալու անսովոր այս հանդիսութեան, ուր հայ-արաբ բարեկամութեան, հայ-արաբ մարզական առողջ մրցակցութեան եւ Սուրիոյ ազատագրութիւնը պանծացնող տօնական ելոյթ մը պիտի ըլլար ֆութպոլի պարզ մրցում մը: Դպրոցական աշակերտներէն մինչեւ շուկայի խանութպանները, արաբ այգեպաններէն մինչեւ գինետուներու հաւատացեալ հայ յաճախորդները, ալեհեր ծերերը, բոլորը: Շատեր ո՛չ իսկ գաղափար ունէին ֆութպոլի մասին, բայց յաղթելու անղըսպելի ցանկութիւնը եւ չը պարտուելու բնազդական մղումը կ'առաջնորդէին բոլորը: Դաշտին արեւմտեան եզերքը երկու շարք ակտիւսներու վրայ նստած կը սպասէին



քայմաքամը, պետական եւ զինուորական պաշտօնատարներ, գիւղաքաղաքի երեւելի անձնաւորութիւններ, Հ.Մ.Ը.Մ.ի ղեկավարներ, դպրոցական հոգաբարձուներ եւ այլն: Քայմաքամին առջեւ, սեղանի մը վրայ դրուած էր իր իսկ կողմէ տրամադրուած խոշոր բաժակ մը, գոր նուաճելու համար պիտի պայքարէին երկու խումբերը:

Գարնանային պայծառ ու զուարթ երեկոյ մըն էր, երբ խումբերը մուտք գործեցին դաշտ եւ պատուի առնելու համար պաշտօնական հիւրերը, շարուեցան քայմաքամին դիմացը: Ծափահարութիւններ, աղմուկ, քաջալերական բացազանչութիւններ կը ճոխացնէին տօնական մթնոլորտը: Մեր սկաուտական չեփորախումբը հնչեցուց սուրիական քայլերգը, ընդհանուր յուզումի ու լուրթեան մէջ:

Հումաթետ տիարի ալէքսոմ սէլեմ էպէթ եւ թեզուլլա նուֆուս ուլ քիրամ...

Դժբախտաբար չեմ յիշեր մեր կազմին բոլոր խաղացողները: մեր բերդապահն էր Տիգրան Ետմուրթեան, բռնակառքի վարորդ, որ ճկուն-ցուցական շատ աչքառու շարժուածքներ ունէր բերդին մէջ, բայց գնդակը դուրս վանելու մէջ այնքան ալ վարպետ չէր, յետասպահներ Յովհաննէս եւ Յակոբ Տէտէեան եղբայրները, երէց սերունդի երկու երիտասարդներ՝ բերդի պաշտպանութեան համար «խոչալ» մարմնակազմով, յաղթանդամ եւ հասակաւոր, միջնապահ Եղւարդ Պալապանեան, իսկ յառաջապահներէն կը յիշեմ մեր մարզիչը՝ Սարգիս Պալապանեան, իր կարգին խոշոր մարմնով երիտասարդ մը, որ գիտէր գնդակին զօրաւոր կերպով գարնելու գաղտնիքը, մեր դասընկեր Սարգիս Պալապանեանը, Գէորգ Պետրեան՝ գնդակին հետ բաւական ճարտար ու ճարպիկ խաղացող մը, այնուհետեւ՝ աջ ծայրը Փրթի (Պետրոս Հաճեան), ձախ ծայրը Միսաք Պաղտասարեան:

Ճարապլուսի Հ.Մ.Ը.Մ.ի ֆութպոլի առաջին խումբը այդ իրիկուն դաշտ կ'իջնէր ճակատելու համար յանուն յաղթանակի ու մարզական արժանաւորութեան:

Ամէն պարագայի տակ, մեր խումբը խառնուրդ մըն էր նորահաս պատանիներու եւ մեզ նախորդող սերունդի վերջամասց ներկայացուցիչներուն: Սերնդափոխութեան գործնական փորձ մը:

Մրցումին իրաւարարն էր բանակի սպայ մը, նիհար եւ

երկարահասակ մարդ մը: Խաղը կ'ընթանար լարուած մթնոլորտի մէջ, յաճախակի վէճերով, եւ մանաւանդ ընդհատումներով, քանի որ բաց դաշտի անմիջական դրացնութեան մէջ էին հայերու եւ արաբներու գերեզմանատուները, եւ գնդակը յաճախ կը կորսուէր գերեզմաններու արանքին մէջ:

Դաշտին վրայ տիրապետող մեր խումբն էր: Ենթասպային մարզիկները անգոր շարժումներ կ'ընէին եւ կը վազվզէին մեր ետեւէն:

Առաջին կիսախաղի աւարտին քիչ մնացած էր, երբ ես գրեթէ առանց խոչընդոտի, արագորէն գնդակը տարի դէպի դաշտին աջ անկիւնը, եւ օդէն ուղարկեցի կեղրոնը, մրցակից բերդին ճիշդ դիմացը, ինչպէս որ պատուիրած էր ինծի մեր մարզիչը: Ըստ երեւոյթին, գնդակը հանդիպեցաւ մարզիչ Սարգիս Պալապանեանի աջ ոտքին, որ սոսկալի հարուածով մը արձանագրեց այնքան սպասուած կողը:

Իրաւարարը ի հաշիւ մեզի սուլած էր թէ ոչ, չեմ գիտեր, բայց իրարանցում մը փրթաւ դաշտին մէջ, ժողովուրդը խուժեց ներս, խաղացողները իրարու խառնուեցան, պոռչտուեց, բացագանչութիւններ, քարկոծում, տուրուդմիոց: Հըրմըլտուք, հայհոյանքներ: Իրարու փաթթուած մարդիկ կային, զիրար գրկած ու գետինը տապալած մարդիկ, դէմքէն, կուրծքէն ու կռնակէն հարուած ստացող ուրիշներ: Ես այսօր կողմ վազելու վրայ էի, երբ մէկը հարուած մը հասցուց ձակատիս եւ գետին տապալեցայ: Բարեբախտաբար վրայ հա-

սաւ հօրեղբայրս: Տուն շտապեցի, հօրեղբօրս յանդիմանութիւններուն մէջ. ան ոչինչ կը հասկնար ֆութպոլէն:

Արդէն գիշեր էր, երբ երկու հոգի եկան մեր տունը եւ զիս առաջնորդեցին ակումբ. քայմաքամը անպայման ուզած էր զիս տեսնել.

-Այդ Փըթին ո՞ւր է,- հարց տուած էր ան,- կանչեցէ՛ք թող գայ:

Քայմաքամը, խորհրդհակցելէ ետք իրաւարարին հետ՝ նշանակուած կողին արդարութեան մասին, որոշած էր բաժակը անձամբ բերել Հ.Մ.Ը.Մ.ի ակումբը եւ յանձնել խումբին, ցաւ յայտնելով պատահարին համար:

Այսօր, երբ կը փորձեմ բացատրութիւն մը գտնել պատահած իրարանցումին մասին, ինծի կը թուի, որ կուրիս պատճառը, բացի անշուշտ հաւանական պարտութիւն մը չընդունելու մարդկային վերաբերումէն, մեր մարզիչին հարուածին ուժգնութիւնն էր եւ... բերդը, որ բոլորովին բաց էր եւ չունէր գնդակը իր ծոցին մէջ պահող ուռկանը... Պարզ է. մրցակից խումբի համակիրները չէին ուզեր հաւատալ, որ գնդակը անցած էր բերդի երեք գերաններուն մէջէն...

Բաժակը երկար ատեն մնաց ակումբին մէջ: Հիմա, որ ո՛չ հայ կայ եւ ոչ ալ Հ.Մ.Ը.Մ. ճարպալուսի մէջ, կը տարակուսիմ ըսելու, որ ան պահ գրուած է տեղ մը...

Բայց կը մնայ շահուած բաժակի մը յուզիչ ու դառն յիշատակը:



Travel Ways - Egypt

NILE CROCODILE CRUISES



Incoming Tour Operator
Hotel & Cruise Reservation
Transportation
Excursions

Attia el Sawalhy St., Serag Center Tower#1
from Makram Ebeid- Nasr City, Cairo, Egypt
Tel: 02 2739400/500/600
www.travelways-egypt.com
marketing@twaysegy.com



ՄԿԱՌՒՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

-Բ-

Յակոբ Կարապետեան/Աքելյա ՄԱՆ ՖՐԱՆՍԻՍԲՕ

Պաշտոնական արարողութիւններու ընթացքին, միայն տարազ կրող պատասխանատուն կամ փոխ մը կը հրահանգէ, թիւրիմացութիւններէ եւ խաչածեղմաներէ խուսափելու համար:

Խոստման եւ երգման արարողութիւնները միայն լման տարազ կրող Աքելյան, խմբապետը եւ անոնց փոխերը իրաւունք պէտք է ունենան կատարելու:

Պայլիկ եւ արծուիկ պատասխանատուներ պէտք է ըլլան տիպար, կատարեալ՝ իրենց տարագով, կեցուածքով ու խօսակցութեամբ, ծաղրանքէ, քննադատութենէ զերծ մնալու համար: Աքելյաներ եւ փոխեր զպայլիկներու պէս կը բարեկեն եւ մեծ մանուկներու պէս կը մըտածեն ու գործեն:

Պայլիկներու վոհմակը առիթ կը ըստեղծէ եւ կը քաջալերէ որ մանուկները գիրար սիրեն՝ առանց ձեւակերպութեան, առանց դժուարութեան եւ անկեղծօրէն իրարու հետ եղբայրանան, կարծէք ընտանեկան մթնոլորտի մէջ ըլլային:

Վոհմակի մը, երամի մը կամ

խումբի մը գործերը օգտակար եւ յաջող կ'ընթանան համբերութեամբ, ուշիմութեամբ, փորձառութեամբ եւ պաղարիւնութեամբ:

ԲԱՆԱԿՈՒՄՆԵՐ
Հաճելի, օգտակար եւ յաջող բանակումներ ունենալու համար նկատի ունենալ հետեւեալ պայմանները:-

-Պայլիկները, արծուիկները եւ արի-արենոյշները առանձին, անջատ բանակումներ ունենան, իրարու արգելք չըլլալու համար, նաեւ՝ ամէն շարժում իր մարզին մէջ հետաքրքրական եւ կարգապահ մնալու յարմարութիւն ստեղծէ: Պայլիկները եւ արծուիկները պայծառ օրերուն միայն 1-2 օրուան բանակում կատարեն, առանձին, լաւ կազմակերպուած, արի-արենոյշ օգնականներով:



-Մնողներէն գրաւոր արտօնագիր ունենալ:
-Մաքուր, հաստատուն եւ ապահով վրաններ ունենալ:
-Բանակատեղիին շուրջը սահմաններ որոշել, որպէսզի բա-





նակողները առանց հրամանի դուրս չելին:

-Հերթապահութիւնը եւ պահակութիւնը արի-արենոյնները ստանձնեն:

-Մաքուր, բմպելի ջուր եւ բաղնիք ունեցող բանակավայր մը գտնել:

-Ձորին մէջ լճացած ջուրերէ, ճահիճներէ հեռու մնալ, միջատներէ եւ սողուններէ գերծ մնալու համար:

-Բանակատեղիին մէջ մերկ չպտուտիլ: Փոխնորդ հագուստ ունենալ:

-Խարուկահանդէսին կրակը հողով եւ խնամքով մարել:

Մրցակցութիւն ստեղծելու հետամուտ ըլլալ: Վրաններու մաքրութեան, կանոնաւորութեան, վրաններու սահմաններու ձեռագին աշխատանքներուն, տարազներուն մաքրութեան, կարգապահութեան, խաղերու եւ պարերու նիշերուն արդիւնքները նկատի ունենալ, մրցանակներ բաժնել Ա. Բ. Գ. ելլող վեց-

եակին, նաեւ՝ բանակումի տիպար գայլիկին եւ արծուիկին:

Գայլիկները բանակատեղիին մէջտեղը վոհմակին թոթեմը կը գետեղեն եւ կը յարդարեն: Իւրաքանչիւր գայլիկի համար քար կամ անպէտք ճիւղ մը կը դնեն, բացութիւն մը պահելով, որ պէսզի Աքելյան կամ Պարուն Մեծ կանչը ընեն:

Կարելի է նաեւ առանց խարոյկի հաւաքուիլ եւ գուարձալիքներով, խաղերով, պարերով, երգերով եւ անակնկալներով հաճելի եւ օգտակար ձեւով գիշերը անցընել:

Սկսուած՝

♦Ձեռագին աշխատանքներու շնորհիւ իր մէջ կը զարգացնէ շինելու եւ գծելու արուեստը:

♦Բնութեան ուսումնասիրութեամբ կը զարգացնէ հաւատքը եւ կրօնասի-

րութիւնը, նաեւ՝ կենդանիներու նկատմամբ սէրն ու գուրգուրանքը:

♦Երգի եւ երաժշտութեան գործիքներու միջոցով կ'ունենայ մաքուր սիրտ, անկեղծութիւն եւ բարեկամութիւն:

♦Մարզական շարժումով, առողջութիւն, ներդաշնակութիւն եւ մարմինի գեղեցկութիւն:

♦Խաղերու միջոցով, գուարթ մթնոլորտ, ընկերասիրութիւն, չարքաշութիւն եւ կարգապահութիւն:

Հաճելի, օգտակար եւ ապահով խաղեր խաղալու համար նկատի ունենալ հետեւեալ կէտերը:-

Իրաւարարին հնազանդիլ եւ չքննադատել գայն:

Յաղթելու համար խելացութիւն, կազմակերպուածութիւն եւ ճարպիկութիւն ունենալ: (Շար. 2)



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home, away from home...

Yerevan
32-38, Hanrabedoutian Street,
Yerevan 375010, Armenia
Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
sales@europehotel.am

www.europehotel.am



«ՄԱՐԶԻԿ»Ի 25ԱՄԵԱԿԻ ՓԱՌԱՇՈՒՔ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ՝ ՍԻՏՆԻԻ ՄԷՉ

- ԵՂԲԱՅՐՆԵՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏՈՅԵԱՆ ԵՒ ԶԱԻԷՆ ԲՐՈՒՏԵԱՆ ԿԸ ՊԱՐԳԵԻԱՏՐՈՒԹԻՆ Հ.Մ.Ը.Մ.Ի «ԱՐԺԱՆԵԱՑ» ՇՔԱՆՇԱՆՈՎ

Թղթակից ՍԻՏՆԻ

Նովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, նախագահութեամբ՝ տէր եւ տիկ. Արիս եւ Անի Իվանեաններու եւ կազմակերպութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ Շրջանային Վարչութեան, «Մարզիկ»ի 25ամեակի փառաշուք տօնակատարութիւնը տեղի ունեցաւ Շաբաթ, 3 Մարտ 2007ի երեկոյեան, «Նիւ Ուէսթեյլա» պարասրահին մէջ: Յատուկ հրաւերով ներկայ էին Պէյրութէն՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, Նիու Սաութ Ուէսթլը նահանգի խորհրդարանի անդամ քոյր Գլատիս Պէրէճիքեան, Ռայտ շրջանի քաղաքապետ Այվըն Փէշ, քաղաքապետարանի անդամ Սարգիս Ետէլեան եւ տիկինը, Հ.Յ.Դ. «Դրօ» առանձնակի կոմիտէի ներկայացուցիչ Հերոս Գրիգորեան եւ տիկինը, Լեոնային Ղարաբաղի Հանրապետութեան մնայուն ներկայացուցիչ Վարուժան Իսկէնտէրեան եւ տիկինը, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Սարգիս Տէր Պետրոսեան եւ տիկինը, քոյր միութիւններու, մամուլի եւ լրատուական մարմիններու ներկայացուցիչներ եւ շուրջ 300 Հ.Մ.Ը.Մ.ականներ ու համակիրներ:

Տօնակատարութեան բացման խօսքը արտասանեց Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ Շրջանային Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Վիգէն Գորիթեան: Եղբայրը բարի գալուստի իր խօսքին մէջ ողջունեց Հ.Մ.Ը.Մ.ի պաշտօնաթերթ «Մարզիկ»ի 25ամեակը եւ այս առիթով



25ամեակի կարկանդակը կը կտրեն Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յարութիւն Քէօշկէրեան, տօնակատարութեան նախագահ եղբ. Արիս Իվանեան, Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան եւ Կեդրոնական վարչութեան անդամ եղբ. Սարգիս Տէր Պետրոսեան:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբայր Գառնիկ Մկրտիչեանը, որ Շրջանային Վարչութեան հրաւերին ընդառաջելով ներկայ եղաւ այս կարեւոր հանդիսութեան: Եղբ. Գորիթեան «Մարզիկ» ամսաթերթի կարեւորութեան անդրադառնալով, բարձր գնահատեց թերթին բովանդակալից նիւթերը, յատկապէս մասնաճիւղէ-մասնաճիւղ բաժինը, որ 99 մասնաճիւղերու վարչութիւններուն եւ անդամներուն համար ուղեցոյց ու դաստիարակիչ կը հանդիսանայ, միաժամանակ ըլ-

լալով ոգիի, արեան ու գաղափարի կապուածութեան ծառայող ազգու միջոց մը: «Պէտք է գուրգուրալ, նիւթապէս ու բարոյապէս տէր կանգնիլ, որպէսզի «Մարզիկ»ը շարունակէ սերընդաշահ իր առաքելութիւնը», ըսաւ ան: Ապա, խօսք տրուեցաւ Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Սարգիս Տէր Պետրոսեանին: Եղբայրը շնորհաւորեց «Մարզիկ»ի տարեդարձը, գնահատեց Շրջանային Վարչութիւնը եւ անոր կողքին աշխատող յանձնախումբը, որ բժախնդրօրէն ու Հ.Մ.Ը.Մ.ավայել կեր-

պով արժեւորեց «Մարգիկ»-ի 25ամեակին նուիրուած տօնակատարութիւնը: Շարունակելով, եղբայր Տէր Պետրոսեան յայտարարեց, որ նշանակալից այս օրուան առիթով պիտի պարգեւատրուին վաստակաշատ երկու եղբայրներ, որոնք Հ.Մ.Ը.Մ.ի մէջ ունին երկար տարիներու ծառայութիւն: Ապա ան հրաւիրեց Կեդրոնական Վարչութեան ատենապետը՝ կատարելու պարգեւատրումը: Հրաւիրուեցաւ եղբ. Գառնիկ Մկրտիչեան՝ տալու իր պատ-



Շրջանային Վարչութեան եւ 25ամեակի լանձնախումբի անդամներու յիշատակի նկար:

գամը, միաժամանակ կատարելու պարգեւատրումը: Եղբ. Մկրտիչեան շնորհակալութիւն յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ի եւ տիկ. Արիս եւ Անի Իվանեանները: Եղբ. Մկրտիչեան շնորհակալութիւն յայտնեց իրենց կատարած նուիրա-

Աւստրալիոյ Շրջանային Վարչութեան հրաւերին համար եւ Կեդրոնական Վարչութեան անունով ողջունեց Աւստրալիոյ հայ գաղութը ընդհանրապէս եւ Հ.Մ.Ը.Մ.ի անդամներն ու համակիր զանգուածը մասնաւորապէս: Հրաւիրուեցան օրուան նախագահութիւնը ստանձնած տէր

ՃԱՆՉՆԱՆՔ

«ԱՐԺԱՆԵԱՅ» ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐ ԵՂԲ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏՈՅԵԱՆ

Եղբ. Յովհաննէս Մարտոյեան ծնած է 1936ին, Երուսաղէմ: 1938ին ընտանիքին հետ կը փոխադրուի Սալթ, Յորդանան: 12 տարեկանին ան կ'անդամակցի Հ.Մ.Ը.Մ.ի Ամմանի սկաուտական շարքերուն: Կը ստանանէ Փոխ Առաջնորդի եւ Առաջնորդի աստիճան եւ գալիկապետի պաշտօն:

1950-1963 եղբ. Յովհաննէս կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի հայէպի միջ-մասնաճիւղային Նաւասարդեան տողանցքներուն: 1951ին կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.ի Ամմանի սկաուտութեան ընդհանուր խմբապետ: 1958ին ան կը նախաձեռնէ արեւոյշններու եւ արծուիկներու խումբերու կազմութեան: 1960-1961 մաս կը կազմէ մասնաճիւղի վարչութեան:

1963ին Աւստրալիա հաստատուելէ ետք, եղբ. Յովհաննէս այլ եղբայրներու հետ կը ձեռնարկէ սկաուտական խումբի մը կազմութեան: 1965ին ան կ'ըլլայ Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ առաջին մասնաճիւղին հիմնադիրներէն: Կ'ընտրուի վարչութեան անդամ եւ կը ստանանէ սկաուտութեան ընդհանուր խմբապետի պարտականութիւնը:

1973ին, ան իր մասնակցութիւնը կը բերէ Սիտնիի

արեւմտեան շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղի հիմնադրութեան: 1974ին կ'ընտրուի վարչական անդամ, ատենապետ, ապա՝ մասնաճիւղի ընդհանուր խմբապետ մինչեւ 1979:

1979ին եղբ. Յովհաննէս մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ անդրանիկ Շրջանային Վարչութեան: Երկու շրջան կ'ըլլայ ատենադպիր, իսկ 4 շրջան՝ ատենապետ: Ընդամէնը 12 տարի մաս կը կազմէ յաջորդական Շրջանային Վարչութիւններու:

Եղբ. Յովհաննէս 1981էն սկսեալ կ'աշխատակցի «Մարգիկ»ին: Ան կը մասնակցի Հ.Մ.Ը.Մ.ի միջդիւանական առաջին եւ երրորդ ժողովներուն (1985, 1993) եւ 1983էն ետք գումարուած Հ.Մ.Ը.Մ.ի բոլոր Պատգամաւորական Ժողովներուն:

Երկարամեայ իր ծառայութիւններուն իբրեւ գնահատանք, եղբ. Յովհաննէս 1995ին կը պարգեւատրուի «Ծառայութեան» շքանշանով:

Անունացած է եւ հայր՝ երեք պաւակի:





Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական վարչության անդամ եղբ. Սարգիս Տէր Պետրոսեան:

տուրիզմի համար եւ յուշատախտակ մը յանձնեց ամուլին: Եղբ. Յովհաննէս Մարտոյեան այս առիթով ստացաւ «Մարգիկ»ի 25ամեակի յուշանուէրը՝ թերթին իր երկարատեւ ծառայութեան ու աշխատակցութեան համար: Եղբ. Մկրտիչեան ըսաւ. «Այժմ ժամանակը հասած է, որպէսզի Հ.Մ.Ը.Մ.ի «Արժանեաց» շքանշանով

պարգեւատրենք վաստակաշատ երկու Հ.Մ.Ը.Մ.ական եղբայրներ, որոնք երկար տարիներու ծառայութիւն ունին, եղբայրներ Յովհաննէս Մարտոյեան եւ Զաւէն Բրուտեան»: Սրահը մէկ մարդու պէս թնդաց, ծափեր ու բացազանչութիւն, միախառնուած՝ «Կեցցէ՛ Հ.Մ.Ը.Մ.» կը յուռէր: Պարգեւատրուող եղբայրներէն ներկայ էր Յովհաննէս Մարտոյեան, դժբախտաբար եղբ. Զաւէն Բրուտեան բացակայ էր անհանգստութեան պատճառով: Հետեւաբար շքանշանը իրեն յանձնուեցաւ յաջորդող Կիրակի, իր բնակարանին մէջ: Պարգեւատրեալ եղբ. Մարտոյեան խօսք առնելով ըսաւ. «Շնորհակալութիւն Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան, որ մեզի արժանացուց այս պատիւին, ու ահա իր առաջարկով այսօր Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ կը պարգեւատրուիմք: Այս շքանշանը կը պատկանի Աւստրալիոյ Հ.Մ.Ը.Մ.ական բոլոր քոյրերուն եւ եղբայրներուն: Այս շքանշանին մէջ ամփոփուած է իւրաքանչիւր

ՃԱՆՉՆԱՆՔ

«ԱՐԺԱՆԵԱՑ» ՇՔԱՆՇԱՆԱԿԻՐ ԵՂԲ. ԶԱՒԷՆ ԲՐՈՒՏԵԱՆ



Եղբ. Զաւէն Բրուտեան ծնած է 1931ին, Չակապիկ, Եգիպտոս: Փոքր տարիքին կը յաճախէ տեղւոյն Պալայեան վարժարանը: Բ. Աշխարհամարտէն ետք ուսումը կը շարունակէ Աղեքսանդրիոյ Պօղոսեան վարժարանը: 1945-1948, կ'աշակերտէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքին, ուր սակայն հետաքրքրութիւններ կ'ըլլան... մարպակաւ: Կը սկսի վոլիպոլ եւ պասքեթպոլ խաղայ, բայց իր նախասիրած մարպակներ կ'ըլլայ ձողով բարձրութիւն ցատկերը: Հետագային կը մասնագիտանայ այդ մարպին մէջ: 1948ին կը վերադառնայ Աղեքսանդրիա եւ կ'անդամակցի «Կամք» Մարմնամարպական Հայ Հետազօտիչներու ակումբին, իբրեւ մարպիկ: Իր նախասիրած մարպակներ կը մնայ աթլետիկայը, յատկապէս արագ վազքը եւ ձողով բարձրութիւն ցատկերը: 1953ին, եգիպտահայ մարպխաղերուն, ձողով բարձրութիւն ցատկերու մէջ կը հաստատէ Հ.Մ.Ը.Մ.ական չափանիշ: Նոյն տարին, Եգիպտոսի աթլետիկ միջոցաւարտութեան կը գրաւէ 3րդ դիրքը: Միաժամանակ ան կը հանդիսանայ Աղեքսանդրիոյ միջակմբային մրցաշարքի ախոյեան: Աղեքսանդրիոյ մէջ, ան աթլետիկ մարպիչներ կ'ունենայ Կարօ Մոմճեանը եւ Կարպիս Քիւփէյեանը, իսկ մարպանքի ուսուցիչներ՝ Սանտայճեանը եւ Ստեփան Խանճեանը:

1963ին, եղբ. Բրուտեան կը հաստատուի Աւստրալիա, Սիտնի: 1965ին, ան ընտանեկան բոյնը կը կազմէ Վարդուհի Փապուճեանի հետ եւ կը բախտաւորուի երկու մանչ զաւակով: Նոյն տարին ան կ'անդամակցի Հ.Մ.Ը.Մ.ի տեղւոյն նորակազմ մասնաճիւղին եւ մինչեւ այսօր հաւատարիմ կը մնայ Հ.Մ.Ը.Մ.ականի իր կոչումին: 1967-1968 եւ 1970-1975 եղբ. Զաւէն մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի «Անդրանիկ» մասնաճիւղի վարչութեան՝ ստանձնելով գանձապահի եւ ատենադպիրի պաշտօններ: 1968ին, եղբ. Զաւէնի կը վստահուի Աւստրալիոյ միջ-մասնաճիւղային Նաւասարդեան Ա. խաղերուն ընդհանուր պատասխանատուութիւնը: Իբրեւ վարչական ներկայացուցիչ, այնուհետեւ ան տեւաբար կ'ըլլայ դաշտերու վրայ, իբրեւ մարպական յայտագիրներ համադրող եւ միջ-մասնաճիւղային Նաւասարդեան խաղերու յաջողութեան մասնակից: 1979ին, եղբ. Բրուտեան մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ նորակազմ Շրջանային Վարչութեան եւ երեք շրջան յաջորդաբար անշահախնդիր կերպով կը ծառայէ միութեան: Անդամակցած է նաեւ Հ.Յ. Դաշնակցութեան: Մաս կազմած է բազմաթիւ յանձնախումբերու եւ եղած է «Արմենիա» շաբաթաթերթի վարչական կազմի անդամ:

Հ.Մ.Ը.Մ.ականի սրտին տրոփիւնը, անոր մէջ խոնոնուած է բոլորին քրտինքը: Մենք միայն պահակները պիտի ըլլանք այս նուիրական «Արժանեաց» շքանշանին: Պատիւ բոլորին»: **Շքանշաններու տուչութենէն ետք, շարունակելով իր խօսքը, եղբ. Գառնիկ Մկրտիչեան ըսաւ.** «... Ես ուրախ եմ որ ձեզի հետ եմ այսօր, միասնաբար կը տօնակատարենք Հ.Մ.Ը.Մ.ի պաշտօնաբերք «Մարգիկ»ի 25ամեակը: Խորին շնորհակալութիւն բոլոր այն նուիրատուներուն, որոնք գործին կարեւորութեան գիտակցելով առատօրէն նուիրեցին «Մարգիկ»ի ֆոնտին: Սիրելիներ՛ր, մէկ բան կ'ուզեմ ըսել, բոլոր շրջանները այցելութեանս ընթացքին յայտարարեցի, որ այս գաղութը իսկապէս ջերմ գաղութ է, լաւ գաղութ է, ասկէ առաջ անձանօթ էի երկրին, չէի այցելած, բայց



«Նաւասարդ» մասնաճիւղի ատենապետ եղբ. Վրէժ Գոլոգոսեան տարաբախտ եղբ. Շահէ Պապլանեանի պասքեթպոլի շապիկը կը յանձնէ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեանին:

կը ճանչնայի գայն Հ.Մ.Ը.Մ.ի ճամբով, եղբայրներու, քոյրներու եւ «Մարգիկ»ին միջոցով: Բայց հիմա որ ներկայ եղայ, տեսայ այն բոլոր իրագործումները, կազմակերպչական հրակայ աշխատանքները, գորս 1960ական թուականներէն մինչեւ օրս կը կատարուի: Իրապէս, այս գաղութը մեծ ուժականութիւն ունի Հ.Մ.Ը.Մ.ի կեանքին յաւելեալ փայլք մը տալու, յաւելեալ գործ մը կատարելու իմաստով: Իմ մաղթանքս եւ փափաքս է, որ մեր նոր սերունդը իրապէս կարենայ համախմբուիլ մեր մասնաճիւղներուն շուրջ, մեր միութիւններուն շուրջ եւ Հ.Մ.Ը.Մ.ը ըլլայ այն միութիւնը, ուր ամէն



անձ ինքզինք ազատ զգայ գալու, տեսնելու, իր տեսակետները յայտնելու եւ իր աշխատանքները տանելու, որովհետեւ վերջապէս մեր մեկնակետը մէկ բան է՝ գաղութը լաւ պահել, երիտասարդութիւնը լաւ պահել, առողջ մարմնի մէջ առողջ միտք ունենալ: Ես շատ ուրախ եմ այս պահուս, երկու օրէն կը մեկնիմ, կը յուզուիմ բաժնուելուս, ուրախ եմ որ կը միանամ ընտանիքիս եւ Լիբանանի եղբայրներուն, բայց հետս կը տանիմ այնպիսի յուշեր, որոնք անմոռանալի պիտի մնան կեանքիս ընթացքին: Տեսնուիք»:

Կեդրոնական Վարչութեան երկու եղբայրները Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան կազմով եւ տօնակատարութեան կազմակերպիչ յանձնախումբով շրջապատուած, միասնաբար, մէկ ձեռք եղած կտրեցին «Մարգիկ»ի 25ամեակի կարկանդակը, Հ.Մ.Ը.Մ.ի պաշտօնաթերթին մաղթելով նորանոր յաջողութիւն եւ յարատեւ վերելք: Եղան բազմաթիւ նուիրատուութիւններ: Իր կարգին, «Նաւասարդ» մասնաճիւղի ատենապետ եղբ. Վրէժ Գոլոգոսեան վարչութեան եւ բոլոր մարգիկներուն անունով Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նուիրեց պասքեթպոլիստ, ողբացեալ Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Շահէ Պապլանեանի թիւ 11 շապիկը: Տարաբախտ եղբ. Շահէ հպարտութեամբ հագաւ եւ սքանչելի խաղարկութեամբ արժեւորեց զայն: Ան քաղցկեղի հիւանդութեամբ մահացաւ 2001 թուականին, 22 տարեկան հասակին:

Խրախճանքի բաժինը խանդավառեց Լիբանանէն յատկապէս հրաւիրուած երգիչ եղբ. Հրաչ Կայծակեան, որ իր գեղեցիկ ձայնով ոչ միայն հմայեց երգի սիրահարները, այլեւ կարողացաւ գոհացնել բոլորին ճաշակը: Ամբողջ գիշերը հսկայ սրահը շուրջպար բռնած պարեց ու երգեց: Խրախճանքին վերջին բաժինով եղբ. Հրաչ ազգային-յեզափոխական երգերու փունջ մը ներկայացուց: Խանդավառութիւնը զագաթնակէտին հասաւ առաւօտեան ժամը Յին, երբ «Արիւնոտ դրօշ» երգով վերջ գտաւ տօնակատարութիւնը:



«Արարատ» մասնաճիղին մօտ:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՑԸ՝ ԱՒՍՏՐԱԼԻԱ

Յովհաննէս Մարտոյեան ՄԻՏՆԻ



Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ Շրջանային Վարչութեան հրահանգով, 23 Փետրուար 2007ին, Լիբանանէն Սիտնի ժամանեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան:

Եղբ. Մկրտիչեանի Աւստրալիա կեցութիւնը եղաւ 10 օր եւ յատկանշուեցաւ ծանրաբեռնուած յայտագիրով: Այսպէս, Սիտնի ժամանումին օրը, կէսօրէ ետք, եղբ. Մկրտիչեան պաշտօնական այցելութիւն մը տուաւ գաղութի Առաջնորդ Աղան Արք. Պալէոզեանի: Տեսակցութեան ներկայ եղան Հ.Մ.Ը.Մ.ի

Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Սարգիս Տէր Պետրոսեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի Աւստրալիոյ Շրջանային Վարչութեան անդամներ: Տեղի ունեցաւ տեսակցութեան փոխանակում՝ մասնաւորապէս նորահաս սերունդին ազգային ըմբռնումներուն եւ Հ.Մ.Ը.Մ.ին վերապահուած աշխատանքին շուրջ:

Նոյն օրը երեկոյեան, եղբ. Մկրտիչեան իրեն ընկերակցող պատուիրակութեան հետ այցելեց Սիտնիի արեւմտեան շրջանի «Նաւասարդ» մասնաճիղը: Վարչութիւնը կազմակերպած էր հաւաքոյթ մը Հայ Մշակութային «Բանոյեան» Կեդրոնի սրահին մէջ: Ջերմ մթնոլորտի մէջ տեղի ունեցաւ ճոխ հիւրասիրութիւն: Հաւաքոյթը սկսաւ Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յարութ Քէօզկէրեանի բացման ու ծանօթացման խօսքով, եւ մասնաճիղի ատենապետ եղբ. Վրէժ Գոլոգոսեանի բարի գալուստի մաղթանքով: Հրաւիր-



«Նաւասարդ» մասնաճիղին մօտ:



«Անդրանիկ» մասնաճիղին մօտ:



«Արարա» մասնաճիղին մօտ:



«Կամք» մասնաճիղին մօտ:

Լեցալ եղբ. Մկրտիչեան՝ տարւել իր պատգամը: Ան անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կառույցին եւ յայտնեց, թէ այսօր Հ.Մ.Ը.Մ. 99 մասնաճիղերով, աւելի քան 25 հազար անդամներով տիրական ներկայութիւն է աշխարհի 16 երկիրներուն մէջ եւ Աւստրալիան այդ կառույցին կարեւոր օղակներէն մէկն է: Եղբ. Մկրտիչեան մաղթեց որ բոլոր անդամները համախումբ աշխատին մասնաճիղին շուրջ եւ զօրավիզ կանգնին անոր բոլոր նախաձեռնութիւններուն:

Շաբաթ 24 եւ Կիրակի 25 Փետրուարին, եղբ. Մկրտիչեան եւ իրեն ընկերակցող պատուիրակութիւնը այցելեց Մելպուռնի «Արարա» մասնաճիղը: Տեսակցութիւններ ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի շրջանի մասնաճիղի վարչութեան հետ: Արծարծուեցան զանազան հարցեր, փոխանակուեցան կարծիքներ ու տեսակէտներ: Իւրաքանչիւր հարցի մասին եղբ. ատենապետը կատարեց բարենպաստ թելադրանքներ:

Կիրակի օր տեղի ունեցաւ հանրային երոյթ՝ Մելպուռնի Հայ Մշակութային Կեդրոնի սրահին մէջ: Եղբ. Մկրտիչեան ներկայացուց լայն զեկուցում մը Հ.Մ.Ը.Մ.ի ընդհանուր կառույցին բազմապիսի աշխատանքներուն մասին: Ներկաները կատարեցին հետաքրքրական հարցումներ, որոնց եղբ. ատենապետը տուաւ սպառիչ պատասխաններ:

Եղբ. Մկրտիչեան թէ՛ Սիտնիի եւ թէ՛ Մելպուռնի մէջ երոյթներ ունեցաւ Սիտնիի հայկական պատկերասփիւռի կայանէն, «Սարգարապատ» եւ «Էս.Պի.Էս.» հայկական ռատիոկայաններէն, նաեւ՝ Մելպուռնի «Ազատամարտ» ռատիոթամէն, միշտ շեշտը դնելով համագործակցութեան եւ համախումբ աշխատանքի կարեւորութեան վրայ:

Չորեքշաբթի, 28 Փետրուարի երեկոյեան, Հ.Մ.Ը.Մ.ի «Արարատ» եւ Համագաղային «Նայրի» մասնաճիղերու կեդրոնին մէջ, Հ.Մ.Ը.Մ.ական բազմաթիւ քոյրեր եւ եղբայրներ իրենց տարիներու ծառայութեան ու նուիրումին համար ստացան «Ծառայութեան» շքանշաններ:

Խօսք առնելով, եղբ. Մկրտիչեան մեծապէս գնահատեց պարգեւատրուող անդամներուն երկար տարիներու ծառայ-



«Արարատ» մասնաճիղի «Ծառայութեան» շքանշանով պարգևատրեալ ցնր:



Միջ-վարչական հանդիպում:



Աղան Արք. Պալեոզեանի մօտ:



Արշակ եւ Սոֆի Գոլրստրն վարժարանին մէջ:

յու թիւնները Հ.Մ.Ը.Մ-ի գանազան աշխատանքներուն:

Հինգշաբթի, 1 Մարտին, եղբ. Մկրտիչեան այցելեց Համագալսինի Արշակ եւ Սոֆի Գոլրստրն ամէնօրեայ վարժարանը, տեսակցութիւն մը ունեցաւ վարժարանի տնօրէն Քայլար Միքայէլեանի եւ ուսուցչական կազմին հետ: Եղբ. Գառնիկ ոգեւորիչ մաղթանքներ փոխանցեց աշակերտութեան:

Ուրբաթ, 2 Մարտին տեղի ունեցաւ այցելութիւն մը՝ Նիւ Սաուլթ Ուէլզ նահանգային խորհրդարանի անդամ քոյր Գլաուսի Պէրէճիքեանին՝ ընտրական իր նոր գրասենեակին բաց-

ման առիթով: Քոյր Գլաուսի շատ փոքր տարիքէն եղած է Հ.Մ.Ը.Մ-ի արժուիկ, արենոյշ, երէց եւ ապա խմբապետ: Ան մինչեւ այսօր կը շարունակէ մնալ հաւատարիմ Հ.Մ.Ը.Մ-ի սերնդակերտ ու հայրենանուէր առաքելութեան:

Կիրակի, 4 Մարտին, եղբ. Մկրտիչեան իր մասնակցութիւնը բերաւ ՀՕՄի Աւստրալիոյ Շրջանային Վարչութեան կազմակերպած միօրեայ սեմինարին, նիւթ ունենալով՝ «Լիբանանի վերջին իրադարձութիւնները եւ ԼՕՍի ունեցած դերը լիբանանահայութեան մէջ»:

'Made from one single slice of natural Australian opal'

Classique
OPAL DIAL WATCH

Sarkis Der Bedrossian

Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.
123 Clarence Street
Sydney 2000
Australia

Phone: +61 2 9290 2199
fax: +61 2 9262 1630
Website: www.classiquewatches.com
Email: Info@classiquewatches.com



Հ.Մ.Ը.Մ.-ՖՐԱՆՍԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԸ ՀԱՆՐԱԾԱՆՕԹ ՄԱՐԶԻԿՆԵՐՈՒ ԿՈՂՔԻՆ



**Սեւան
Նպարեան
ՓԱՐԻՉ**

2 0 0 6
Սեպ-
տեմ-
բերէն
2007

Յուլիսը Ֆրանսայի մէջ հռչակուած է «Հայաստանի Տարի»: Այդ առիթով, Ֆրանսայի տարածքին տեղի ունեցան եւ կ'ունենան պետական մակարդակով կազմակերպուած աւելի քան 800 ձեռնարկներ՝ մշակութային, պատմական թէ մարզական ծիրէն ներս:

2007 Մարտ 31ին, փարիզեան շրջան՝ Իսի լէ Մուլինոյի մէջ տեղի ունեցաւ, այլ ձեռնարկներու շարքին, Ֆուլթայլի մրցում մը:

Հ.Մ.Ը.Մ.ի խաղացողները եւ մարզիչը Ալէն Պօղոսեանի եւ Եւրի Ծորքայէֆի հետ: Զախէն աջ՝ Քրիս Քուսի, Ռոպեր Ֆերմանեան («Foot du Monde»ի ատենապետ), Ալէն Պօղոսեան, Եւրի Ծորքայէֆ, Բաֆֆի Պաղտասարեան, Աշոտ Խաչատուրեան, Անդրանիկ Պահարեան եւ Սեւան Անանեան:

Մրցումին կազմակերպչական բաժինը յանձն առած էր Ռոպեր Ֆերմանեան, որ եղած է արհեստավարժ Ֆուլթայլիստ եւ խաղացած է Ֆրանսական «Ռանս» խումբէն, հռչակաւոր խաղացող Քոփայի կողքին:

Ներկայիս ան ատենապետն է «Foot du Monde» խումբին՝ բաղկացած Ֆրանսայի պատկերասփիւռի երկրորդ կայանի թղթակիրներէ, որոնք եւս իրենց կարգին եղած են անցեալի արհեստավարժ խաղացողներ:





31 Մարտի յետմիջօրէին, Jean Bouin դաշտին վրայ տեղի ունեցած մրցումը իրարու դէմ հանեց Ֆրանսայի պատկերասփիւռի երկրորդ կայանի թղթակիցներու խումբը եւ հայկական խումբը, 18 խաղացող, միայն հայերէ բաղկացած, որոնց կարգին՝ 1998ի Մոնտիալի ախոյեան՝ Ֆրանսայի ազգային խումբէն Եուրի Ճորքայէֆ, Ալէն Պօղոսեան, նաեւ՝ էրիք Ասատուրեան, Ռոպէր Ֆերմանեան, Արթուր Տէմիրճեան, Սուրէն Խաչատուրեան (Հայաստանի հաւաքականի 17 տարեկաններու խումբէն խաղացող), Վէնսէն Եազմաճեան (բերդապահ) եւ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսէն՝ մարզիչ Աշոտ Խաչատուրեան (Հայաստանի անցեալի հաւաքականի խմբապետ), Բաֆֆի Պաղտասարեան, Սեւան Անանեան, Աբգար Գապայեան եւ Քրիստ Քոմմի:

Խաղին տեւողութեան, հայկական խումբը ցուցաբերեց ֆուտպոլի լաւ մակարդակ եւ մրցումը աւարտեցաւ ի նպաստ վերջինին՝ 5-0 արդիւնքով: Արձանագրենք, որ կոլերը նշանակեցին Եուրի Ճորքայէֆ (2 կոլ), Բաֆֆի Պաղտասարեան (2



Եուրի Ճորքայէֆ, Անդրանիկ Պահարեան եւ Ալէն Պօղոսեան:

կոլ) եւ Աշոտ Խաչատուրեան (1 կոլ):

Մրցումին ներկայ էին պաշտօնական անձնաւորութիւններ, ինչպէս՝ Ֆրանսայի մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպան Էտտուարտ Նալպանտեան, Իսի լէ Մուլինոյի քաղաքապետ-երեսփոխան Անտրէ Սանթինի, Ֆրանսական պատկերասփիւռի երկրորդ կայանի մարզական բաժնի տնօրէն Դանիէլ Պիլալեան եւ ուրիշներ:

Նշենք, որ հայկական խումբի մարզիչներն էին Ֆրանսայի անցեալի ֆուտպոլի խումբի մարզիչ՝ Ժան Ճորքայէֆ (Եուրի Ճորքայէֆի հայրը) եւ Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի կողմէ եղբ. Անդրանիկ Պահարեան:

Նոյն երեկոյեան, պատկերասփիւռի երկրորդ կայանէն ցուցադրուեցաւ խաղէն բաժին մը:

Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի մարզիչները լաւ յիշատակ պիտի պահեն այս պատմական հանդիպումէն, զոր հայկական դրօշին տակ հաւաքած էր միջազգային համբաւի տիրացած ծանօթ մարզիչներ:

BDF ••••

SUD S.A.L. AGENT EXCLUSIF. Tel: 09-214507/9/10



16 ՏԱՐՈՒԱՆ ԸՆԴՄԻՋՈՒՄԷ ԵՏՔ՝

ՄԻՋ-ՄԱՍՆԱՃԻՒՂԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՒ ՓԱՌԱՀԵՂ ՏՈՂԱՆՑՔ՝ ՀԱԼԷՊԻ ՄԵՉ

Խաժակ Տիլպերեան
ՀԱԼԷՊ

Ապրիլ ամսուան առաջին օրերէն իսկ, Հալէպի հայահոծ շրջաններու գլխաւոր հրապարակներուն վրայ անցորդներուն ուշադրութիւնը կը գրաւէր հետեւեալ յայտարարութիւնը. «Ձատկըւան տօնին առթիւ Հ.Մ.Ը.Մ.ի միջմասնահիւղային մարզական հանդիպումներ եւ ականդական տողանցք»:

-Ի՞նչ, ի՞նչ, այս տարի տողա՞նցք կայ. Ֆուլթպոլի խա՞ղ կայ, վերջապէս, որքա՞ն կարօտցած ենք:

Այո՛, երկար տարիներու ընդմիջումէ ետք, Ապրիլ 9ին, Ջատկուան երկրորդ օրը, Միւլէյմանիէի «Ռիայէթ էլ Շապապ» մարզադաշտ հրաւիրուած էր Հալէպահայտութիւնը, ներկայ գտնուելու համար իր կողմէ այնքա՞ն սիրուած ու փնտուած մարզական հանդիպումներուն ու ականդական տողանցքին, ապրելու օր մը անցեալի փառքով, ներկայի տրոփով, ապագայի յոյսով:



Ճշդուած ժամէն՝ 2-30 շատ առաջ, հայտութիւնը խումբ առ խումբ կը դիմէր մարզադաշտ «լաւ տեղ մը գրաւելու» համար: Մանուկներ իրենց ծնողներուն հետ, երիտասարդներ, տարեցներ, սօնական օրուան երփներանգ գոյներով զարդարուն՝ յաւելեալ փայլք մը

կու տային մարզադաշտին:

Ժամը 2-15ին, Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի եւ Հալէպի Ֆուլթպոլի ներկայացուցչական խումբերը, առաջնորդութեամբ շեփորախումբին եւ դրօշակակիր խմբակին, մուտք գործեցին դաշտ եւ պատուոյ թրիպիւնին դիմաց կատարեցին յու-



շաղթողներու փոխանակում: Օրուան հանդիսավար՝ Ճորճ Տաուլէի արաբերէն բարի գալուստի խօսքէն ետք, շեփորախումբը նուազեց Լիբանանի քայլերգը, ապա՝ «Յաուալ նահատակ» քայլերգով գալն կամրջեց Սուրիոյ օրհներգին, մինչ Սուրիոյ եւ Լիբանանի դրօշները բարձր ու ձիգ կը ծածանէին կողք-կողքի:

Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան կազմակերպութեամբ միջ-մասնաճիւղային այս հանդիպումը կը հովանաւորէր Հայկալի Պատի կուսակցապետ Ապտէլ Քատէր Մասրի, կը նախագահէր Բերիոյ Թեմի Հայոց Առաջնորդ Շահան Եպս. Սարգիսեան: Հրաւիրեալներու շարքին էին Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ Եղբ. Գառնիկ Մկրտիչեան, անդամներ՝ Ստեփան Տէր Պետրոսեան, Պատրիկ Կիւլպէնկեան եւ Գէորգ Կարապետեան, Հայ Կաթողիկէ Համայնքի

Առաջնորդ Պետրոս Արք. Միրիաթեան, Հայ Աւետարանական Եկեղեցւոյ Համայնքապետ Վերապատուելի Յարութիւն Սելիմեան, Հայաստանի Հանրապետութեան Հայկալի գլխաւոր հիւպատոս Արթուր Մանասէրեան, պետական երեսփոխան մեթր Սունպուլ Սունպուլեան, հոգեւոր հայրեր, պետական մարմիններու ներկայացուցիչներ, Ազգային իշխանութեան եւ պատկան մարմիններու անդամներ, գաղութին մէջ գործող մշակութային, բարեսիրական, մարզական, կրթական, ընկերային, երիտասարդական միութիւններու ներկայացուցիչներ, եկեղեցիներու թաղականութիւններ եւ այս բոլորին կողքին պատուոյ թրիպիւնին կողքին եւ դիմացը բոլորած շուրջ եօթը հազար հայորդիներ:

Հանդիպումին սկիզբը խօսք առաւ Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Բաֆֆի Տէր Աբրահամեան: Ան ըսաւ, որ «Զատիկը

ո՛չ միայն Քրիստոսի յարութիւնը կը խորհրդանշէ, այլեւ ի տես Հ.Մ.Ը.Մ.ական փառանգի յաղթական այս երթին՝ կու տայ ազգային հպարտանքի երանելի զգացում, ուր արի-արեւոյշներ, գայիկ-արծուիկներ ու մարդիկներ, որոնց կուրծքերը ուռած հպարտութեան եւ գոհունակութեան բարձր զգացումներով, կը քալեն դէպի պայծառ ապագայ»:

Անցեալի վառ յիշատակներ ոգեկոչելով, եղբայրը ըսաւ. «Հ.Մ.Ը.Մ-ի միջ-մասնաճիւղային մրցումներն ու տողանցքները դարձան հայ ժողովուրդի պարծանքը, ինչպէս նաեւ գոյատեւելու եւ յաղթելու արտայայտութիւնները: Այս փառապանծ միութիւնը մարմնակրթանքին եւ սկաուտութեան, ֆութպոլին եւ պասքէպոլին միացուց հայկականութեան եւ հայրենասիրութեան զգացումները: Հետեւաբար, հայ ապրելու, հայութեան արժեքներն ու



իտեալները իրականացնելու հաստատ համոզումով եւ առաջադրանքներով հիմնուած այս միութիւնը իր գործունէութեամբ արժանացաւ հայ ժողովուրդի վստահութեան եւ անվերապահ աջակցութեան»:

Շարունակելով, ան հաստատեց.
«Հ.Մ.Ը.Մ.ը իւրաքանչիւր գաղութի համար եղաւ մարդակերտումի եւ հա-

յակերտումի հնոց: Անոր շարքերէն շրջանաւարտ պարման-պարմանունիները եղան ապագայի վստահելի ուսուցիչը, դաստիարակը եւ ազգային գործիչը: Ուստի, հայ ապրելու, հայ մնալու, հայութեան գոյատեւման սատարելու եւ հայ երիտասարդը բարոյապէս ու ֆիզիքապէս մաքուր պահելու ի խնդիր տարուած աշխատանքին եւ

պայքարին ցուցահանդէսը եղան միջմասնանիւղային խաղերը»:

Ապա, իր խօսքը եզրափակելով, եղբայրը շեշտեց, որ «Հ.Մ.Ը.Մ.ը աշխարհացրիւ մեր գաղութները միացնող գօրաւորագոյն կազմակերպութիւնը եղաւ իր բազմաճաւար անդամներով, գանազան տեսակի աշխատանքներով եւ մարզական ու սկաուտական նուա-



Philippe Photo Trade

- Audio / Video Production / Post Production Systems
- Liner / Non-Liner Editing Systems
- Data / Video Large Screen Projection Systems
- Audio / Video Systems for Professional Application
- Conferencing / Simultaneous Translation Systems
- Language Labs & Conventional Training Aids Systems

EXPERTS IN AUDIO-VISUAL SYSTEMS INTEGRATION AND TOTAL CONTROL APPLICATION

Head Office: 1(a) Mesaha St., Orman Sq., Dokki, Zip Code: 12311 A.R. Egypt.
Tel: 7491350 (8Lines) Fax: 7481069 E-mail: philippe@ritsec2.com.eg

Alex. Branch: 33 Sidi El-Metwally St., El-Attarin / Alexandria
Tel: (03)4916017 Fax: (03)4923051 E-mail: philippe@ritsec2.com.eg

Philippe Photo Trade

Assadourian Bros.



նումներով: Տակալին, իր հիմնադրու-
թեմեն մինչև այսօր Հ.Մ.Ը.Մ.ի շեփո-
րախումբերը անսահման ոգեւորու-
թիւն եւ հպարտանք ներշնչեցին հայ
հասարակութեան, ուր իւրաքանչիւր
հայ ո՛ւր որ ալ եղաւ, ինքզինք զգաց
հայրենի հողին վրայ»:

ՖՈՒԹՊՈՒԼԻ ՄՐՑՈՒՄԸ

Խօսքին յաջորդեց Հ.Մ.Ը.Մ.ի Հալէ-
պի եւ Պէյրուսի ֆութպոլի խումբերուն
միջեւ սպասուած մրցումը: Մրցումին
ճրգ վայրկեանին Պէյրուսի կազմը նշա-
նակեց իր առաջին կողմ՝
եղբ. Կարօ Գազէզեանի
միջոցով: Այնուհետեւ,
Պէյրուսի կազմը շարու-
նակեց իր յաճախակի
գրոհները եւ 12րդ
վայրկեանին արդիւնքը
բարձրացուց 2ի, Սե-
պասթիան Կոստանդին-
եանի գեղեցիկ կողով:
Այսպէս, առաջին կիսա-
խաղը վերջ գտաւ 2-0
արդիւնքով: Դադարին
ցուցադրական ելոյթ ու-
նեցան Հ.Մ.Ը.Մ.ի Հալէ-
պի քարաթէի մարզիկ-
ները, որոնք ներկայա-
ցուցին ինքնապաշտպա-
նութեան ձեւեր: Ապա,
ելոյթ ունեցաւ Միջագ-
գային Հայ Սեւ Գօտինե-
րու (ABBA) Հալէպի

խումբը, ներկայացնելով քիչ պոքսինկի,
քոնկ ֆուրի, ուու շուի եւ մարտական
այլ ձեւեր:

Ֆութպոլի երկրորդ կիսախաղը
սկսաւ նոյն թափով եւ եղբայրական
ոգիով: Երկկողմանի գրոհներով խում-
բերը փորձեցին նշանակել կողեր:
Մրցումին վերջին վայրկեաններուն Հա-
լէպի կազմը նշանակեց իր միակ եւ
մրցումին վերջին կողմ՝ եղբ. Յարութ
Թաշճեանի միջոցով: Հ.Մ.Ը.Մ.ավայել
ընթացքով սկսած եւ նոյն ոգիով շարու-
նակուած մրցումը վերջ գտաւ 2-1 ար-

դիւնքով, ի նպաստ Պէյրուսի կազմին:

ՄԱՆՂԱԿԱՆ ՏՈՂԱՆՅՔԸ

Հասած էր խանդավառութեան դա-
գաթնակէտի պահը: Ժողովուրդը ան-
համբեր կը սպասէր տողանցքին, որ չու-
շացաւ: Պատուոյ դրօշակակիր խումբին
առաջնորդութեամբ, շեփորախումբին
գոռ երաժշտութեան կշռոյթով ընթացք
առաւ տողանցքը՝ Սուրիոյ, Հայաստա-
նի, Լիբանանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի դրօշնե-
րուն, Սուրիոյ գինանշանին, նախագահ
Պաշար Ասատի նկարներուն խոշոր

պատասաներով, ու տակա-
ւին՝ Հ.Մ.Ը.Մ.ի վահանին
եւ միջագգային սկառուտու-
թեան 100ամեակը նշող
ցուցատախտակներով: Տո-
ղանցքին մարզիկներն ու
սկառուտները, խումբ առ
խումբ: Իւրաքանչիւր
խումբ կ'առաջնորդուէր
Հ.Մ.Ը.Մ.ն ու մարզական
շարժումը դրուատող
պատասառով մը, հայերէն
կամ արաբերէն լեզուով
գրուած: Տողանցքին իրենց
մասնակցութիւնը բերին
Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի եւ Գա-
միշիի շեփորախումբերու
կողքին, Հալէպի կրտսեր-
ներու նորակազմ շեփորա-
խումբը, Պէյրուսի, Դա-
մասկոսի, Գամիշիի, Լա-
թիաքիոյ, Քեսապի եւ Հալէ-



պի մարզիկները, արի-արենոյնները, գայիկներն ու արծուիկները, աւելի քան 1200 հոգի: Բոլորը խրոխտ ու տիրական քայլերով անցան շարք առ շարք, ժողովուրդին անընդհատ «հուռուս»ներու եւ ծափերու տարափին տակ:

Հասած էր փառատօնին փակման պահը, երբ Առաջնորդ Շահան Եպս. Սարգիսեան ողջնչող պատգամով մը թարգմանը հանդիսացաւ օրուան միջնուրտին: «Ցնծա՛յ եւ ուրախացի՛ր ժողովուրդ հայոց, այսօր տօն է Ս. Յարութեան. տօն է Հ.Մ.Ը.Մ.ի օրհնեալ յարութեան, ողջո՛յն Սուրիոյ մեր ժողովուրդին, ողջոյն Լիբանանի մեր հայութեան, ողջոյն Հայաստանի հայութեան... Պիտի շարունակենք մեր երթը, յառա՛ջ, մի՛շտ յառաջ նահատակ ցեղի անմահներ, այս պատկերը որուն այնքա՛ն կարօտը ունեինք, այսօր իրականութիւն դարձած է: Պիտի տողանցենք Հալէպէն Դամասկոս եւ այլ շրջաններ: Այս երթին ընդմէջէն վերյիշեցէք այս միութեան փառապանծ անցեալը: Պի-



տի քալենք միշտ յառաջ՝ սուրիական հայրենիքի, քրիստոնէութեան եւ իսլամութեան ակունքը եղող այս օրհնեալ հայրենիքին մէջ: Թող օրհնեալ ըլլայ Սուրիան, օրհնեալ ըլլայ մայր Հայրենիք Հայաստանը, օրհնեալ ըլլայ համայն հայութիւնը ի Հայաստան եւ սփիւռս աշխարհի»:

Սրբազան Հօր պատգամէն ետք, կատարուեցաւ բաժակներու տուչութիւն: Հուսկ, շեփորախումբին կողմէ Լիբանանի եւ Սուրիոյ քայլերգներուն կատարողութեամբ, մարզական փառատօնը վերջ գտաւ հպարտութեան անմոռանալի պահեր պարգեւելով ներկաներուն:

Maison Mere
4 Sekkat El Manakh, Cairo - Egypt
Tel: (202) 3913296 - 3918542
Fax: (202) 3903899

Ramses Hilton
Tel: (202) 5758000 - 5744400
Direct: (202) 5751790

Zamalek
11 Hassan Sabry st., Degla center
Tel: (202) 3322121 - 3322130
Fax: (202) 3322130



VARTAN KAZANDJIAN



KAZANDJIAN

E-mail: vartan@intouch.com Joaillier-Orfevre Fonde en 1920

պի մարզիկները, արի-արենոյնները, գայլիկներն ու արծուիկները, աւելի քան 1200 հոգի: Բոլորը խրոխտ ու տիրական քայլերով անցան շարք առ շարք, ժողովուրդին անընդհատ «հուռուս»ներու եւ ծափերու տարափին տակ:

Հասած էր փառատօնին փակման պահը, երբ Առաջնորդ Շահան Եպս. Սարգիսեան ողջնչող պատգամով մը թարգմանը հանդիսացաւ օրուան միջնուրտին: «Ցնծա՛յ եւ ուրախացի՛ր ժողովուրդ հայոց, այսօր տօն է Ս. Յարութեան. տօն է Հ.Մ.Ը.Մ.ի օրհնեալ յարութեան, ողջո՛յն Սուրիոյ մեր ժողովուրդին, ողջոյն Լիբանանի մեր հայութեան, ողջոյն Հայաստանի հայութեան... Պիտի շարունակենք մեր երթը, յառա՛ջ, մի՛շտ յառաջ նահատակ ցեղի անմահներ, այս պատկերը որուն այնքա՛ն կարօտը ունեինք, այսօր իրականութիւն դարձած է: Պիտի տողանցենք Հալէպէն Դամասկոս եւ այլ շրջաններ: Այս երթին ընդմէջէն վերյիշեցէք այս միութեան փառապանծ անցեալը: Պի-



տի քալենք միշտ յառաջ՝ սուրիական հայրենիքի, քրիստոնէութեան եւ իսլամութեան ակունքը եղող այս օրհնեալ հայրենիքին մէջ: Թող օրհնեալ ըլլայ Սուրիան, օրհնեալ ըլլայ մայր Հայրենիք Հայաստանը, օրհնեալ ըլլայ համայն հայութիւնը ի Հայաստան եւ սփիւռս աշխարհի»:

Սրբազան Հօր պատգամէն ետք, կատարուեցաւ բաժակներու տուչութիւն: Հուսկ, շեփորախումբին կողմէ Լիբանանի եւ Սուրիոյ քայլերգներուն կատարողութեամբ, մարզական փառատօնը վերջ գտաւ հպարտութեան անմոռանալի պահեր պարգեւելով ներկաներուն:

Maison Mere
4 Sekkat El Manakh, Cairo - Egypt
Tel: (202) 3913296 - 3918542
Fax: (202) 3903899

Ramses Hilton
Tel: (202) 5758000 - 5744400
Direct: (202) 5751790

Zamalek
11 Hassan Sabry st., Degla center
Tel: (202) 3322121 - 3322130
Fax: (202) 3322130

**VARTAN
KAZANDJIAN**

KAZANDJIAN

E-mail: vartan@intouch.com **Joillier-Orfevre Fonde en 1920**



Ղերմ միջնորդի մէջ, խաղի մը միջոցով արծարծեց նիւթ մը՝ առօրեայ յայտագիրներու ընթացքին պատահած կարգ մը երեւոյթներու մասին: Իւրաքանչիւր պատասխանատուի առիթ տրուեցաւ փոխանցելու իր կարծիքը:

Սեմինարին աւարտին ներկաներուն փոխանցուեցան արժեւորման թղթիկ-հարցարաններ:

Կիրակի, 15 Ապրիլ 2007ին, առաւօտեան ժամը 6.30ին, նախաճաշէն ետք, խմբապետները պատրաստուեցան դիմաւորելու մասնաճիւղերու արի-արենոյձ խմբաւորումները եւ անցընելու յաջորդ աշխատանքին:

Հ.Մ.Ը.Մ-ի Պէնյութի, Անթիլիասի, Պոլոճ Համուտի եւ Ժրտէյտէի մասնաճիւղերէն արի-արենոյձ խումբեր հասան Ճիւնիի ակումբ: Իւրաքանչիւր պատասխանատու միացաւ իր խումբին, եւ բոլորը հասան Ճիւնիի մօտակայ շրջան մը՝ Հարէթ Սախըր, ուրկէ պիտի սկսէր օրուան աշխատանքը:

Մասնաճիւղերու բոլոր արիներն ու արենոյձները բաժնուեցան խմբակներու: Իւրաքանչիւր խմբակ, երկու ուղեցոյցի ընկերակցութեամբ, Հարէթ Սախըրի շրջանէն, անտառներու ճամբով, մագլցեցաւ որոշ բարձունք մը: Քարոտ ու փշոտ ճամբաներէն անոնք հասան Հարիսայի Ս. Աստուածածին եկեղեցիին բակը:

Յատկանշական է արձանագրել, որ այս գործունէութեան իրենց սիրալոյսով մասնակցութիւնն ու օժանդակութիւնը բերին նախկին խմբապետներ՝ եղբայրներ Ներսէճ Լիպարեան, Մանօ Գազանճեան, Հրաչ Պօշնաքեան եւ Գէորգ Վարդանեան: Վերոյիշեալ եղբայրները եղան խումբերուն ուղեցոյցները եւ մագլցումի դժուարին հանգրուաններուն օժանդակեցին քոյրերուն ու եղբայրներուն:

Ժամը 1.30էն սկսեալ խմբակները հասան ճշդուած վայրը, ուր իւրաքանչիւր խմբակ ստացաւ կէսօրուան ճաշի մթերք մը, որմէ ետք անոնք շարունակեցին արշաւել դէպի Ղոսթա: Ճամբու ընթացքին անոնք պատրաստեցին իրենց օրուան ճաշը եւ ճաշեցին: Ապա, շարունակելով իրենց արշաւը, ժամը 4էն սկսեալ հասան որոշուած վայրը: Թէեւ բոլորը յոգնած էին, սակայն անոնք դէմքերուն վրայ գծուած էր գոհունակութեան ժպիտ մը: Անոնք կարողացած էին բնութեան մէջ շարքաօրէն մագլցիլ ու կատարած էին իրենցմէ պահանջուած աշխատանքները:

Խումբերը ուրախ եւ գոհունակ սրտով բաժնուեցան իրարմէ՝ դարձեալ հանդիպելու յոյսով:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԵՐԿՕՐԵԱՅ ՍԵՄԻՆԱՐ



տասխանատու կազմերը: Սեմինարին առաջին դասախօսը՝ Սիլվա Փափազեան ներկայացուց մոկլիներու (3-6 տարեկան), գայլիկ-արծուիկներու (6-9/9-11 տարեկաններ) հոգեբանութիւնը, այդ տարիքի պատանիներուն հետ վարուելակերպը եւ գործելաոճը: Մասնակցողները դասախօսին հետ արծարծեցին այդ տարիքին կապուած հարցեր եւ իրենց հետ պատահած դէպքերու լուծումները:

Յաջորդ հանգրուանը եղաւ գրոյց՝ Շրջանային խմբապետ քոյր Սեդա Պէշլեանին հետ, խաղի մը միջոցով, սկաուտութիւնը մտահոգող հարցերուն շուրջ:

Քոյր Ալին Լիպարեան-Քէչէպաշեան փոխանցեց, թէ ի՞նչ ձեւեր կարելի է օգտագործել յայտագիրները հաճելի եւ հետաքրքրական ձեւով փոխանցելու համար:

Ընթրիքէն ետք տեղի ունեցաւ հետախուզական արշաւ:

Սեմինարին յաջորդող օրը գայլիկ, արծուիկ եւ մոկլի պատասխանատուներուն այցելեցին Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի

Թղթակից ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ



Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային գայլիկ-արծուիկ ճիւղերու խմբապետութեան կազմակերպութեամբ, Շաբաթ 14

եւ Կիրակի 15 Ապրիլ 2007ին տեղի ունեցաւ դաստիարակչական երկօրեայ սեմինար մը՝ Ազգ. Սուրէն Խանամիրեան վարժարանին մէջ, Ֆանար: Պատասխանատուն էր արծուիկ ճիւղի խմբապետ քոյր Պէթի Պէշլեան, իսկ մասնակցողներն էին Պոլոճ Համուտի, Անթիլիասի եւ Ժրտէյտէի մասնաճիւղերու գայլիկ, արծուիկ եւ մոկլի վոհմակներու պա-



ՊԵՏԱԿԱՆ ԱՐՏՕՆՈՒԹԵԱՄԲ՝

ՄԿԱՌՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԿԸ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒԻ ԵՒ ԿԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԻ ՍՈՒՐԻՈՅ ՄԷՁ



Խաժակ Տիպէրեան ՀԱԼԷՊ

Շուրջ 15 տարուան ընդհատումէ ետք, 2006ին, սկառուտական շարժումը պետական հրամանագիրով մը վերահաստատուեցաւ Սուրիոյ մէջ, նոր թափ ու ծաւալ տալով միջազգային այս մեծ շարժումին գարգացման երկրին մէջ:

Այսպէս, սուրիական երիտասարդական շարժման հովանիին տակ աշխատանքի լծուած սկառուտական գերագոյն մարմինը առաջին օրէն ձեռնամուխ

եղաւ երկրին տարբեր քաղաքներուն մէջ յառաջացնելու համապատասխան մարմիններ եւ կազմակերպելու սկառուտական վաշտեր:

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հայկական միութիւններու պարագային, Հ.Մ.Ը.Մ., Հ.Մ.Մ. եւ Վասպուրական, որոնք արդէն ունէին սկառուտական շարքեր, ընդառաջեցին պետական կոչին, դառնալով կարեւոր ներկայութիւն այս շարժումին մէջ: Առաջին հանդիպումը տեղի ունեցաւ 2006ի Նոյեմբերին, Հ.Մ.Ը.Մ.ի Թիլէլի երբեմնի ակումբին մէջ: Հանդիպումին ներկայ

գտնուեցաւ Հալէպի սկառուտական մարմնի պատասխանատու Նիհատ Ղուրի իր ընկերակիցներով: Ներկայ էին նաեւ Հ.Մ.Ը.Մ.ի սկառուտ նախկին խմբապետներ, ներկայիս պաշտօն ունեցող երիտասարդ խմբապետներու կողքին: Տրուեցաւ զեկոյց մը՝ աշխատանքի ձեւին մասին: Որոշուեցաւ կազմել Հալէպի սկառուտական գերագոյն մարմինը: Եղան առաջարկներ եւ կարծիքներու փոխանակում: Քանի մը շաբաթ ետք կազմուեցաւ մարմինը, որուն մաս կազմեց Հ.Մ.Ը.Մ.ի Հալէպի մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Հայկազ Ասատուրեան: Կազմուած մարմինը շուտով կազմակերպեց դասընթաց



Պետական արտոնագիրներու լանձնուսի օրը:

մը, որուն մասնակցեցան նաեւ Հ.Մ.Ը.-Մ.ական սկաուտ եղբայրներ եւ ստացան համապատասխան վկայագիրներ:

Կիրակի, 11 Փետրուար 2007ին, Հայկ-պի սկաուտական մարմնի պատասխանատու Նիհատ Ղուրի այցելեց «Գրիգոր Յակոբեան» եւ «Շաւարշ Քրիսեան» միաւորներու կեդրոնները, Ազգ. Քառնն Եփփէ Ճեմարան եւ Հ.Մ.Ը.-Մ-ի պարտէզ, ընկերակցութեամբ Հայկպի վարչութեան եւ Սկաուտ. Խորհուրդին: Զուգ կեդրոններուն մէջ խօսք առնելով՝ Ղուրի բարձր գնահատեց կատարուած աշխատանքը եւ պատասխանատուներուն յանձնեց արտոնագիրները՝ իբրեւ վաւերացուած սկաուտական վաշտեր: Այսպէս, «Գրիգոր Յակոբեան» միաւորը ստացաւ 7րդ, իսկ «Շաւարշ Քրիսեան» միաւորը 8րդ վաշտի կարգավիճակ, վաշտապետներ ունենալով եղբայրներ Պօղոս Պալէոզեանը եւ Հայկազ Ասատուրեանը:

ՀԱԼԵՊԻ ՄԱՍՆԱՃԻՂԻՆ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ՅՈՒՑԱՀԱՆԳԵՍԸ

Միջազգային սկաուտութեան հիմնադրութեան 100ամեակին եւ հայ ու սուրիական սկաուտութեան հիմնադրութեան 95ամեակներուն առիթով, Հ.Մ.Ը.-Մ-ի Հայկպի մասնաճիւղին Սկաուտ. Խորհուրդը կազմակերպեց սկաուտական ցուցահանդէս մը, որուն բացումը տեղի ունեցաւ Կիրակի, 18 Փետրուար 2007ին, «Արամ Մանուկեան» Ժողովրդային Տան «Լեոն Շանթ» սրահին մէջ, ներկայութեամբ՝

Վահան Վրդ. Պէրպէրեանի, Տաթև Քհնյ. Միքայէլեանի, Հ.Մ.Ը.-Մ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Գէորգ Կարապետեանի, Սուրիոյ Շրջանային Վարչութեան եւ Սկաուտ. Խորհուրդէն ներկայացուցիչներու, Հայկպի մասնաճիւղի զոյգ վարչութիւններու ներկայացուցիչներու եւ բազմաթիւ հիւրերու:

Հ.Մ.Ը.-Մ-ի Հայկպի մասնաճիւղի սկաուտութեան հազուադէպ մէկ հանդիպումն էր որ տեղի կ'ունենար այդ օր: Հանդիպում մը, որ մէկ սրահի մէջ կը համախմբէր ներկայ գործօն տարագաւոր Հ.Մ.Ը.-Մականները իրենց երէց քոյր-եղբայրներուն հետ, ցոյց տալու համար, թէ հիններուն առաքելութիւնը փոխանցուած է նորերուն, միշտ յիշե-

լով, սորվելով եւ օգտուելով նախորդներու փորձառութեան:

«Յառաջ նահատակ» քայրերգով կատարուած դրօշակի արարողութեանէն ետք հրաւիրուեցաւ Սկաուտ. Խորհուրդի ատենապետ եղբ. Պօղոս Պալէոզեանը, որ բարի գալուստ մաղթեց ներկաներուն եւ շնորակալութիւն յայտնեց ցուցահանդէսին պատրաստութեան համար աշխատած բոլոր քոյր-եղբայրներուն: Ապա հրաւիրուեցաւ մասնաճիւղի խմբապետ եղբ. Աւետիս Տէրվիչեանը՝ ներկայացնելու համար բացման խօսքը: Եղբ. Տէրվիչեան անդրադարձաւ միութեան ներկայ աշխատանքներուն:

Այնուհետեւ, հիւրերը այցելեցին տաղաւարները, որոնք կ'ընդգրկէին հետեւեալները՝ սկաուտական կրակարաններ, բուրգի ձեւեր, Մորսի այբուբեն (երկու լեզուով), սուլիչներ, հետախուզական նշաններ, մանրակերտներ, զանազան տարազներ, արխիւներու յատուկ բաժին մը՝ անցեալի խմբային նկարներ եւ ձեռագիր զանազան աշխատանքներ: Գայլիկ-արծուիկներու բաժինը կ'ընդգրկէր Մոկլիի աշխարհը՝ վրանով ու կայմով օժտուած բանակալայրով:

Տրամադրութիւնները բարձր էին, այնքան կոկիկ, այնքան բժախնդրութեամբ պատրաստուած աշխատանք էր, որ կը գոհացնէր բոլորին հետաքրքրութիւնները: Տեղին է յիշել, թէ ցուցահան-





դէսին երրորդ օրը տեղի ունեցաւ պետական հիւրերու ընդունելութիւն, գլխավորութեամբ՝ Սուրիոյ սկստական շարժման կեդրոնական յանձնախումբի ատենապետ Ապտէլ Մընէմ Սաուպի եւ սկստական նիհատ Ղուրբի: Հիւրերու շարքին էին Հայ Կաթողիկէ Համայնքի Առաջնորդ Պետրոս Արք. Միրիաթեան, Հալէպի մէջ գործող սկստական վաշտերու ներկայացուցիչներ եւ հրաւիրեալներ: Հիւրերը դիմաւորուեցան հայկական Դրոզ եւ Տրոզ վաշտերու պատասխանատուներուն կողմէ: Տաղաւարները այցելելէ ետք անոնք շնորհակարանքի եւ գնահատանքի խօսքեր փոխանցեցին ցուցահանդէսի կազմակերպիչներուն:

Յուշահանդէսը իր հետապնդած քարոզչական նպատակին հասաւ ու անգամ մը եւս ներկայացուց հայու ստեղծագործ միտքն ու հոգին:



ԳՐՕՇՆԵՐՈՒ ԵՒ ՊԷՃԵՐՈՒ ԾՐԱԳԻՐԻ ՅԱՆՁՆՈՒՄ

Կիրակի, 4 Մարտ 2007ին, Հալէպի Հ.Յ.Մ.ի նախկին Հ.Մ.Ը.Մ.ի ակումբին մէջ, կէսօրուան ժամը 12ին, տեղի ունեցաւ Հալէպի սկստական վաշտերու դրօշներու եւ ծրագիրի յանձնումը: Հալէպի սկստական գերագոյն

մարմնի ներկայացուցիչներուն ներկայութեամբ խօսք առաւ եղբ. Հայկազ Ասատուրեան, որ բարի գալուստ մաղթելէ ետք՝ խօսքը տուաւ մարմնի պատասխանատուին՝ Նիհատ Ղուրբին: Ան իր կարգին շնորհակարանք վաշտերու ներկայացուցիչները, որոնց վաշտերը դարձան պաշտօնապէս վաւերացած սկստական միաւորներ: Ապա, Ղուրբի յանձնեց սկստական պետական ծրագիրները, վաշտերու դրօշները եւ տուաւ պէճերու նմոյշներ, որոնք պիտի տեղադրուին սկստական միօրինակ եւ միաձեւ տարագին վրայ: Հաւաքէն ետք տեղի ունեցաւ հիւրասիրութիւն եւ կարծիքներու փոխանակում՝ ընդհանուր աշխատանքներու շրջագիծէն ներս:

ARMENIA
for private and group trips
www.saberatours.fr

Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY **Armavia**
Արմավիա

Photos: © Yarm Arhuzé-Bertrand / Ag. Terre vue du Ciel. Licence 075 960031. StudioVCCEN 2007 1905

Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS

Select your Journey

Guided Tours for 8 Days or 12 Days

11, rue des Pyramides
75001 Paris
tel 331 42 96 10 10
fax 331 42 96 18 77
saberatours@selectour.com

48, cours de la Liberté
69003 Lyon
tel 334 78 60 13 66
fax 334 78 60 92 26
sevan@selectour.com

67, La Canebière
13001 Marseille
tel 334 95 09 30 60
fax 334 95 09 30 61
marseille@wasteels.fr

32-38, rue Hanrabedoutian
Yerevan
tel 374 10 52 55 55
fax 374 10 56 40 30
sabera@arminco.com



ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԻ 100ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ՝ ԱՄՄԱՆԻ ՄԷՋ

Ալին Պեննէեան ԱՄՄԱՆ



Մ.Ը.Մ-ի Ամմանի մասնաճիւղի սկաուտական կազմին եւ ծնողներուն համար յիշատակելի օր մը եղաւ «Հայ Սկաուտի Օր»ուան այս տարուան հանդիսութիւնը, որ նուիրուեցաւ համաշխարհային սկաուտական շարժումի 100ամեակին:

Օրուան հանդիսութեան բացումը կատարելով, մասնաճիւղին 75 հոգինոց սկաուտական կազմը սրահ մուտք գործեց շեփորախումբի եղանակներով: Յորդանանի եւ Հայաստանի քայլերգներէն ետք, Առաջնորդներ քոյրեր Լուսին Գուլաբսըզեան եւ Մարիա Ինգապապեան հայերէն եւ արաբերէն բացման խօսքերով անդրադարձան սկաուտական շարժման դերին եւ յաջողութեան՝ անցնող 100 տարիներուն:

Հանդիսութեան ներկայ էին Հ.Մ.Ը.Մ-ի եւ Հ.Օ.Մ-ի վարչութիւնները, մասնաճիւղին նախկին ատենապետները, խմբապետները, ծնողներ եւ միութեան անդամներ ու համակիրներ:



Մասնաճիւղին խմբապետները նախկին ատենապետներուն՝ եղբայրներ Ծորճ Տաբէսեանի եւ Էլի Պէննէեանի հետ:

Բոլորին մեծ ուրախութիւն պարգեւեց դայլիկ-արծուիկներու պատրաստած գեղարուեստական բաժինը, որ հարուստ էր նոր երգերով ու կանչերով:

Օրուան բանախօսն էր նախկին խմբապետուհի եւ վարչական կազմի անդամ քոյր Արսինէ Ճամպագեան: Քոյրը իր խօսքին մէջ անդրադարձաւ «Հայ Սկաուտի Օր»ուան իմաստին, սկսելով սկաուտութեան շարժման ստեղծումէն, Հ.Մ.Ը.Մ-ի առաջին սերունդէն մինչեւ այսօր: Իբրեւ նախկին սկաուտ, քոյրը խօսեցաւ սկաուտական շարժումի արժանիքներուն եւ սկաուտական կեանքի անմոռանալի յիշատակներուն մասին, որոնք անջնջելի հետք կը ձգեն Հ.Մ.Ը.Մ-ի մաս կազմող արիւարենոյցներուն մօտ:



Մասնաճիւղին աստիճանաւոր պատասխանատուներու կազմը հանդիսութեան ատարտին:



Նախկին խմբապետներու պարգևատրում:

Հանդիսութեան ընթացքին արիւնքը կազմեցին բուրգեր: Ապա, խմբապետութեան խօսքը ներկայացուց եղբ. Սեւան Պէննէեան, որ մասնաճիւղին սկստական աշխատանքներուն մասին գաղափար մը տալով՝ ընդհանուր գիծերու մէջ ներկաներուն փոխանցեց «Միշտ պատրաստ» ըլլալու սկստական նշանաբանին իմաստը, որուն իրականացումը կը կատարուի յարատեւ աշխատանքով: Եղբայրը նաեւ գնահատեց պատասխանատու կազմին զոհողութիւնները՝ մանաւանդ

այս օրերուն, ազնիւ նկարագրի տէր սերունդներ պատրաստելու իրենց գործին մէջ:

Սկստական երգի բաժինին յաջորդեց զաւեշտի մը ներկայացումը:

Հանդիսութեան վերջին բաժինը անակնկալ էր բոլորին համար: Քանի մը պատասխանատուներ ստացան իրենց աստիճանները, ապա՝ խմբապետական կազմը յատուկ գնահատագիրներով եւ յուշանուէրներով պատուեց նախկին խմբապետներ քոյր Սիլվա Մենեքէեան-Պաղսարեանը, եղբ. Սեւան Սարգիսեանը, եղբ. Կարօ Եոլմճեանը եւ քոյր Արսինէ Ճամպազեանը, որոնք մասնաճիւղին սկստական կազմէն ներս երկար տարիներ աշխատանք տարած են եւ միշտ քաջալերած են ներկայ կազմը:

Փակման խօսքէն ետք տեղի ունեցաւ 100ամեակի մոմավառութիւն: Գնահատելի էր սրտաբուլի նուիրատուութիւններով բոլորին մասնակցութիւնը՝ վառելու համար օրուան 100 մոմերը:

Տպաւորիչ հանդիսութիւնը արժանացաւ ծնողներու եւ ներկաներու գնահատանքին եւ փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby

HOTEL



PAVILLON MONCEAU
PARIS

Full of charme,
Tastefully decorated 36 rooms
and 6 suites with individual
heating/air conditioning,
direct access telephone line,
internet connection, minibar,
safety box and satellite TV.
Private bathroom with hairdryer.
The suites can accommodate
3 adults or a family
with parents and 2 children.



43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38

infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՄՄԱՆԻ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԿԵԱՆՔԻ ԶԳԱԼԻ ԱՇԽՈՒԺԱՑՈՒՄ

-Ա. ԵՒ Բ. ԿԱՐԳԻ ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ ԵՒ ՊՏՈՅՏ ՄԸ՝ ԴԷՊԻ ՓԵԹՐԱ

Ային Պէննէեան ԱՄՄԱՆ

Հ .Մ.Ը.Մ.Ի Ամմանի ըսկառուութիւնը զգալի աշխուժութիւն մը կ'ապրի վերջին ամիսներուն: Մասնաճիւղին խմբապետական կազմը հետեւողական ու տքնաջան աշխատանքով իր շուրջ բոլորած է նոր ու խոստմնալից տարրեր, որոնց հետ դաստիարակչական զանազան ծրագիրներ կատարելով՝ վաղուան համար կը պատրաստէ գաղութին եւ միութեան անհրաժեշտ մարդուժ:

Այսպէս, Փետրուար-Մարտ ամիսներուն մասնաճիւղը ունեցաւ երկու սեմինար: Առաջինը յատկացուեցաւ դեկավարման նիւթին, թէ ի՞նչ պէտք է լլյան սկառու պատասխանատուներու արժանիքները, խղեր եւ յայտագիրներ պատրաստելու ձեւերը եւ խմբակային ոգին ամրապնդելու միջոցները:

Սեմինարին ընթացքին շեշտուեցան պատասխանատուներու ուսերուն դըրւած պարտականութիւնները, նուիրեալ գործի անհրաժեշտութիւն եւ ազգային ու միութենական առողջ



դաստիարակութիւն փոխանցելու կարեւորութիւնը:

Երկրորդ սեմինարը արժարծեց «Ստեղծագործ մտածողութիւն» նիւթը: Սեմինարին նիւթերը ճշգրեց եւ կլոր սեղաններու միջոցով պատրաստեց նման աշխատանքներու Յորդանանեան եւ Միջին Արեւելեան մակարդակի պատասխանատուներու կողքին, սեմինարին մասնակցեցաւ մասնաճիւղին սկառուական նորակազմ յանձնախումբը:

Սեմինարին աւարտին, խմբապետական կազմը զնահատեց մասնակցները եւ համապատասխան հաստատագիրներ յանձնեց 18 քոյր-եղբայրներու:

ՊՏՈՅՏ՝ ԴԷՊԻ ՓԵԹՐԱ

Սեմինարներու կողքին, արտասակրմբային գործունէութեան եւս զարկ տալու համար, մասնաճիւղին խմբապետութիւնը նախաձեռնեց դէպի Փեթրա պտոյտի մը: Փեթրան Ամմանէն 3 ժամ հեռաւորութեամբ եւ 2000 տարուան հնութեամբ պատմական հիւնալի վայր մըն է: Փեթրայի պտոյտ-արշաւին մասնակցեցան Բ. կարգի սկառուներ:

Յայտնենք, որ մասնաճիւղին պատասխանատու կազմը մասնակցեցաւ նաեւ մագլցումի եւ չարքաշութեան խղերու, յատուկ կեդրոնի մը մէջ: Մասնագէտ մարզիչներու հսկողութեամբ, բոլորը լաւ ժամանակ մը անցուցին այդ օր եւ նոր բան մը փորձած ու սորված վերադարձան ակումբ:





Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՄՄԱՆԻ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ԵՒ ԱՍՏԻՃԱՆԱԻՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԵՐՈՒՆ

Օրելի-Արաքս Անտոնեան ԱՄՄԱՆ

ՀՄԸՄ-ի Ամմանի խմբապետական եւ աստիճանաւորական կազմերը, 15 քոյր-եղբայրներ, 30-31 Մարտ 2007ին, երկօրեայ այցելութիւն մը կատարեցին Դամասկոս, նպատակ ունենալով միջ-մասնաճիւղային գործակցութիւն հաստատել:

Այցելութիւնը իր տեսակին մէջ առաջինն էր: Դամասկոս հասնելով, քոյրերն ու եղբայրները այցելեցին Սետնայա սրբատեղին, ապա անոնք ուղղուեցան շրջանի հանրաժանօթ հին շուկան:

Յաջորդ օրը, քոյրերն ու եղբայրները առաջնորդուեցան Հ.Մ.Ը.Մ-ի Դամասկոս ակումբը, ուր զիրենք կը սպասէին Հ.Մ.Ը.Մ-ի տեղւոյն մասնաճիւղին վարչականները, խմբապետական կազմն ու աստիճանաւորները:



Հակառակ անոր որ Դամասկոսի մասնաճիւղը Ամմանի մասնաճիւղին ամէնէն մօտիկն է, սակայն առաջին անգամն էր որ նման հանդիպում մը տեղի կ'ունենար: Տարբեր միջավայրէ եկած քոյրեր ու եղբայրներ, Հ.Մ.Ը.Մ-ի ոգիով իրարու ծանօթ էին արդէն, հետեւաբար անոնք կարճ ժամանակի մէջ ընտելացան իրարու,

հին բարեկամներու նման, կողք-կողքի նստած, նոյն երգերն ու կանչերը երգելով:

Ակումբէն ներս միջնորդող սիրալիր էր: Կատարուեցաւ հիւրասիրութիւն եւ յուշանուէրներու փոխանակում:

Բարձր տրամադրութեամբ, քոյրերն ու եղբայրները Ամման վերադարձան 31 Մարտին, դարձեալ իրարու հանդիպելու յոյսով:

With the compliments of

Restaurant Al-Mayass



ՄԵՄԻՆԱՐ՝ ՃԻՒՆԻՒ ԱԿՈՒՄԲԻՆ ՄԷՉ, ԱՐՇԱՒ՝ ՃԻՒՆԻԷՆ ՀԱՐԻՍԱՎ ԵՒ ՂՈՍԹԱ

Թղթակից ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ

ՀՄԸՄ-ի Լիբանանի Շրջանային խմբապետութեան արի եւ արենոյձ ճիւղերու կազմակերպութեամբ, Շաբաթ 14 եւ Կիրակի 15 Ապրիլ 2007ին տեղի ունեցաւ միջ-մասնաճիւղային երկօրեայ գործունէութիւն:

14 Ապրիլին, ՀՄԸՄ-ի Պէյրութի, Պուրճ Համուտի, Անթիլիասի եւ Այնճարի մասնաճիւղերու պատասխանատուները ձիւնիի ակումբին մէջ ունեցան դաստիարակչական միօրեայ սեմինար մը, որուն ընթացքին ընկերային ու մտերմիկ մթնոլորտի մէջ անոնք ստացան զիրենք հետաքրքրող սկաուտական այլազան գիտելիքներ:

«Ով հայ արի» քայլերգով սեմինարին բացումը կատարեցաւ: Առաջին հերթին ներկաներուն փոխանցուեցան թղթիկներ, որոնց վրայ ներկայացուած էր պատմուածք մը, իսկ աւարտին՝ հարցում մը: Սեմինարին մասնակիցները իրենց կարգին արծարծեցին նիւթը եւ տուին կարծիքներ:

ՀՄԸՄ-ի Լիբանանի Շրջանային նախկին ընդհանուր խմբապետ եղբ. Վաչէ Նաճարեան ներկայացուց «Տիպար սկաուտը»: Նախքան նիւթը փոխանցելը, եղբայրը դաստիարակչական խաղ մը կազմակերպեց պատասխանատուներուն համար, որմէ ետք զրոյցի ձեւով ան ներկայացուց նիւթը, ապա՝ երեք խումբերու բաժնեց ներկաները, իւրաքանչիւր խումբին տուաւ դասախօսութեան հետ առնչուող նիւթ մը՝ իբրեւ աշխատանք, որմէ ետք խմբակ առ խմբակ ներկայացուցին նիւթը: Այնուհետեւ, եղբայրը խանդավառ խաղով մը փակեց դասախօսութիւնը:

Յաջորդը՝ «Սկաուտութիւնը ժամանակակից է» նիւթն էր, գոր ներկայացուց ՀՄԸՄ-ի Լիբանանի Շրջանային նախկին խմբապետ եղբ. Րաֆֆի Կէօլօղլանեան: Ներկաները յայտնեցին իրենց թեր ու դէմ կարծիքները, ապա եղբայրը հաճելի կանչ-խաղով մը փակեց դասախօսութիւնը:

Դադարէ մը ետք, ՀՄԸՄ-ի Շրջանային խմբապետութեան երէց ճիւղի խմբապետ եղբ. Կարէն Աբրահամեան, ընկերակցութեամբ թմրեցուցիչներու դէմ պայքարի «Հորիզոն» կեդրոնի ներկայացուցիչ Յարութ Արապեանի, ներկայացուց թմրեցուցիչի մոլուկեան մասին նիւթ մը: Այս առիթով, հա-



մակարդելի միջոցով ցուցադրուեցան կարգ մը նկարներ: Վերոնշեալ նիւթէն ետք, սեմինարին մասնակիցները ընկերային մթնոլորտի մէջ պատրաստեցին իրենց օրուան ընթրիքը՝ խորովածը:

Ընթրիքէն ու ընկերային մտերմիկ պահէն ետք, թէեւ ժամը բաւական ուշ էր, սակայն անոնք պատրաստ էին լսելու այլ նիւթ մը: Շրջանային խմբապետուհի քոյր Սեդա Պէշլեան

ՄԱՀԱԶԴ

«Մարգիկ»ի վարչութիւնը կը գուժէ իր երկարամեայ ցրուիչին՝

ԵՂԲ. ՅԱԿՈՒԲ ԳԱՐԱԿԵՕԶԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 3 Մայիս 2007ին:

ՄԱՀԱԶԴ

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային վարչութիւնը կը գուժէ իր շրջանի հաւատարմ եղբայրներէն՝

ԵՂԲ. ՅԱԿՈՒԲ ԳԱՐԱԿԵՕԶԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 3 Մայիս 2007ին:



Ղերմ միջնորդի մէջ, խաղի մը միջոցով արծարծեց նիւթ մը՝ առօրեայ յայտագիրներու ընթացքին պատահած կարգ մը երեւոյթներու մասին: Իւրաքանչիւր պատասխանատուի առիթ տրուեցաւ փոխանցելու իր կարծիքը:

Սեմինարին աւարտին ներկաներուն փոխանցուեցան արժեւորման թղթիկ-հարցարաններ:

Կիրակի, 15 Ապրիլ 2007ին, առաւօտեան ժամը 6.30ին, նախաճաշէն ետք, խմբապետները պատրաստուեցան դիմաւորելու մասնաճիւղերու արի-արենոյձ խմբաւորումները եւ անցընելու յաջորդ աշխատանքին:

Հ.Մ.Ը.Մ-ի Պէնյուրթի, Անթիլիասի, Պոլոճ Համուտի եւ Ժրտէյտէի մասնաճիւղերէն արի-արենոյձ խումբեր հասան Ճիւնիի ակումբ: Իւրաքանչիւր պատասխանատու միացաւ իր խումբին, եւ բոլորը հասան Ճիւնիի մօտակայ շրջան մը՝ Հարէթ Սախըր, ուրկէ պիտի սկսէր օրուան աշխատանքը:

Մասնաճիւղերու բոլոր արիներն ու արենոյձները բաժնուեցան խմբակներու: Իւրաքանչիւր խմբակ, երկու ուղեցոյցի ընկերակցութեամբ, Հարէթ Սախըրի շրջանէն, անտառներու ճամբով, մագլցեցաւ որոշ բարձունք մը: Քարոտ ու փշոտ ճամբաներէն անոնք հասան Հարիսայի Ս. Աստուածածին եկեղեցիին բակը:

Յատկանշական է արձանագրել, որ այս գործունէութեան իրենց սիրալոյսով մասնակցութիւնն ու օժանդակութիւնը բերին նախկին խմբապետներ՝ եղբայրներ Ներսէճ Լիպարեան, Մանօ Գազանճեան, Հրաչ Պօշնաքեան եւ Գէորգ Վարդանեան: Վերոյիշեալ եղբայրները եղան խումբերուն ուղեցոյցները եւ մագլցումի դժուարին հանգրուաններուն օժանդակեցին քոյրերուն ու եղբայրներուն:

Ժամը 1.30էն սկսեալ խմբակները հասան ճշդուած վայրը, ուր իւրաքանչիւր խմբակ ստացաւ կէսօրուան ճաշի մթերք մը, որմէ ետք անոնք շարունակեցին արշաւել դէպի Ղոսթա: Ճամբու ընթացքին անոնք պատրաստեցին իրենց օրուան ճաշը եւ ճաշեցին: Ապա, շարունակելով իրենց արշաւը, ժամը 4էն սկսեալ հասան որոշուած վայրը: Թէեւ բոլորը յոգնած էին, սակայն անոնք դէմքերուն վրայ գծուած էր գոհունակութեան ժպիտ մը: Անոնք կարողացած էին բնութեան մէջ շարքաօրէն մագլցիլ ու կատարած էին իրենցմէ պահանջուած աշխատանքները:

Խումբերը ուրախ եւ գոհունակ սրտով բաժնուեցան իրարմէ՝ դարձեալ հանդիպելու յոյսով:

ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԵՐԿՕՐԵԱՅ ՍԵՄԻՆԱՐ



տասխանատու կազմերը: Սեմինարին առաջին դասախօսը՝ Սիլվա Փափազեան ներկայացուց մոկլիներու (3-6 տարեկան), գայլիկ-արծուիկներու (6-9/9-11 տարեկաններ) հոգեբանութիւնը, այդ տարիքի պատանիներուն հետ վարուելակերպը եւ գործելաոճը: Մասնակցողները դասախօսին հետ արծարծեցին այդ տարիքին կապուած հարցեր եւ իրենց հետ պատահած դէպքերու լուծումները:

Յաջորդ հանգրուանը եղաւ գրոյց՝ Շրջանային խմբապետ քոյր Սեդա Պէշլեանին հետ, խաղի մը միջոցով, սկառուտութիւնը մտահոգող հարցերուն շուրջ:

Քոյր Ալին Լիպարեան-Քէչէպաշեան փոխանցեց, թէ ի՞նչ ձեւեր կարելի է օգտագործել յայտագիրները հաճելի եւ հետաքրքրական ձեւով փոխանցելու համար:

Ընթրիքէն ետք տեղի ունեցաւ հետախուզական արշաւ:

Սեմինարին յաջորդող օրը գայլիկ, արծուիկ եւ մոկլի պատասխանատուներուն այցելեցին Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի

Թղթակից ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ



Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի Շրջանային գայլիկ-արծուիկ ճիւղերու խմբապետութեան կազմակերպութեամբ, Շաբաթ 14

եւ Կիրակի 15 Ապրիլ 2007ին տեղի ունեցաւ դաստիարակչական երկօրեայ սեմինար մը՝ Ազգ. Սուրէն Խանամիրեան վարժարանին մէջ, Ֆանար: Պատասխանատուն էր արծուիկ ճիւղի խմբապետ քոյր Պէթի Պէշլեան, իսկ մասնակցողներն էին Պոլոճ Համուտի, Անթիլիասի եւ Ժրտէյտէի մասնաճիւղերու գայլիկ, արծուիկ եւ մոկլի վոհմակներու պա-

բոլոր մասնաճիւղերէն նախկին խմբապետներ, որոնք ներկայիս ծնողներ են: Անոնք հանդիպում մը ունեցան ներկայ պատասխանատուներուն հետ: Այցելուներն էին նախկին խմբապետներ՝ Հ.Մ.-Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Կարպիս Գապասագայեան (Պէյրուս), եղբայրներ Գէորգ Գազանճեան (Ճիւնի), Վաչէ Նաճարեան (Ժլտէյտէ), Գէորգ Գրիգորեան (Պուրճ Համուս), քոյրեր Ժանէթ Փամպուլեան-Տ.Ղազարեան (Այնճար), Անի Գատեան-Մուրաջանեան (Անթիլիաս) եւ Թամար Գոճաօղլանեան-Ճինպաշեան (Անթիլիաս):

Քոյր Փառլա Գէորգեան-Եղիայեան այս հանդիպումին իբրեւ զրուցավար առիթ տուաւ ծնողներուն, որպէսզի արտայայտուին եւ իրենց մտահոգութիւնները ներկայացնեն ներկայ պատասխանատուներուն: Առիթ տրուեցաւ նաեւ, որ պատասխանատուները իրենց կարգին իրենց ղեկավարութիւնները եւ կարգ մը ծնողներու անտարբերութիւնը արծարծեն փորձառու խմբապետներու հետ: Նախկին խմբապետները, իրենց փորձառութենէն մեկնած, կատարեցին թելադրանքներ եւ տուին ցուցմունքներ:

Սեմինարին նախօրեակին մասնակցողները բաժնուած էին խմբակներու եւ իրենց պարտականութիւն տրուած էր յայտագիր մը պատրաստել ու ներկայացնել: Քոյր Մարալ Հաճինազարեան-Տէմիրճեան պատրաստուած յայտագիրներուն ծանօթանալէ ետք կատարեց կարգ մը փոխանցումներ եւ թելադրանքներ:

Քոյր Ժանէթ Տէր Ղազարեան պատասխանատուներուն փոխանցեց որեւէ աշխատանքի յայտագրի ժամերը բաժնելու կարեւորութիւնը եւ ըսաւ, թէ ինչ աշխատանքներ պէտք է ընդգրկեն հաւաքոյթները, որպէսզի անոնք աւելի գրաւիչ ըլլան գայիւններուն եւ արծուիկներուն համար:

Սեմինարին մասնակիցներուն փոխանցուեցաւ շտապ օգնութեան մասին նիւթ մը, որուն մանրամասնօրէն անդրադարձաւ Վարուժ Ժուլֆայեան:

Երկօրեայ դաստիարակչական այս սեմինարին աւարտին, քոյրերն ու եղբայրները արժեւորման թղթիկներու



վրայ արձանագրեցին իրենց տպաւորութիւնները եւ վերանորոգեցին իրենց յանձնառութիւնը՝ շարունակելու իրենց

աշխատանքը ի նպաստ Հ.Մ.-Ը.Մ.ի գայիւններուն, արծուիկներուն եւ մոկլիններուն:

ԼԻՔԱՆԱՆԵԱՆ ՍԿԱՌՏԱԿԱՆ ՀԱՒԱՔ

Թղթակից ՊԷՅՐՈՒԹ

Կ ա գ մ ա կ եր պ ու լ թեամբ Լիբանանի երիտասարդութեան եւ մարմնամարզի նախարարութեան եւ գործակցութեամբ Լիբանանի սկստական եւ արեւուշահան ֆետերասիոններուն, Շաբաթ 14 եւ Կիրակի 15 Ապրիլ 2007ին տեղի ունեցաւ երկօրեայ հաւաք մը՝ Աժալթունի արհեստից վարժարանին մէջ, «Թուֆուլա Մուստիհա... Լիլուպնան էլ Ղատ» նշանաբանով: Լիբանանի սկստական տարբեր միութիւններէ 116 սկստներ մասնակցեցան այս հաւաքին: Հաւաքին գլխաւոր պատասխանատուն էր Լիբանանի ֆետերասիոնի մօտ Հ.Մ.-Ը.Մ.ի սկստութեան ներկայացուցիչ, երէց ճիւղի խմբապետ եղբ. Ժանօ Քէչէճեան: Երկօրեայ աշխատանքին Հ.Մ.-Ը.Մ.էն իբրեւ օժանդակ իր մասնակցութիւնը բերաւ եղբ. Մկրտիչ Քիւրքեան (Հ.Մ.-Ը.Մ.ի Ժլտէյտէի մասնաճիւղի երէց), իսկ իրենց ձիրքերը ներկայացուցին քոյր Վանայ Չոլաքեան (արծուիկ, Պուրճ Համուսի մասնաճիւղէն), որ արաբերէնով բանաստեղծութիւն գրելու եւ արտասանելու մէջ գրաւեց 4րդ դիրքը, եւ եղբ. Յովիկ Աղամեան (գայիւկ, Պուրճ Համուսի մասնաճիւղէն), որ գծագրութեան բաժինին մէջ արձանագրեց պատուաբեր արդիւնք:



Նշենք, որ կազմակերպիչ մարմինը մեծապէս տպաւորուեցաւ Հ.Մ.-Ը.Մ.ի մասնակցութեամբ եւ մասնակիցներուն մակարդակով:



ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԳՉԱՄԵԱԿԻ ՀՍԿՈՒՄԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Թղթակիցներ ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏ/ՊԷՅՐՈՒԹ

Հայկական Ցեղասպանության 92ամեակի ոգեկոչման ձեռնարկներու շարքին, Երկուշաբթի, 23 Ապրիլ 2007ի երեկոյեան, Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի մասնաճիւղերու՝ Պէյրուսի, Պուրճ Համուտի, ժրտէյտէի եւ Անթիլիասի արեւարենոյ խումբերը, երէց եւ պարմանուհի փաղանդները եւ խմբապետական կազմերը իրենց մասնակցութիւնը բերին Ապրիլեան նահատակներու ոգեկոչման հսկումին: Հայկական Ցեղասպանութեան Ոգեկոչման Լիբանանահայ Կեդրոնական Մարմինին կազմակերպած յիշատակի այս ձեռնարկին նախօրեակին, Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտները ծաղկեպսակ մը գետեղեցին Պիքֆայայի նահատակաց յուշարձանին առջեւ:



ՊԷՅՐՈՒԹԻ ՄԱՍՆԱԿՑՈՒՄԻՆ ՍԿԱՈՒՏՆԵՐՈՒՆ ՅԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔԸ՝ ԱՊՐԻԼԵԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ

Երեքշաբթի, 24 Ապրիլ 2007ին, Հ.Մ.Ը.Մ-ի Պէյրուսի մասնաճիւղի սկաուտները իրենց յարգանքի տուրքը մատուցեցին Ապրիլեան նահատակներու յիշատակին, էլրէֆիէի Հայ Կա-

թողիկէ Պատրիարքարան այցելելով եւ մասնաճիւղի սկաուտներուն անունով Եղեռնի յիշատակին կանգնեցուած յուշակոթողին ծաղկեպսակ մը գետեղելով:

Յարգանքի մատուցման մասնակցեցան 132 սկաուտներ, մասնաճիւղի անդամներ, ընկերակցութեամբ Հ.Մ.Ը.Մ-ի շեփորախումբին, ինչպէս նաեւ՝ Սկաուտ Խորհուրդին, վարչութեան, շրջանի պատանիներուն եւ Լ.Օ. Խ-ի անդամներուն:



Յայտագիրը սկսաւ տողանցքով՝ «Ազատամարտ» ակումբէն մինչեւ Պատրիարքարան, ուր սկաուտները գետեղեցին ծաղկեպսակներ, ապա՝ Լիբանանի եւ Հայաստանի քայլերգները ունկնդրելէ ետք, խօսք առաւ Հայ Կաթողիկէ Պէյրուսի Պատրիարքական Թեմի ընդհանուր փոխանորդ հայր Վարդան Եպս. Աշգարեան: Յայտագիրը փակուեցաւ «Տէլ Եաման» եւ «Տէր Ողորմեա» եղանակներու ունկնդրութեամբ (նուագ՝ հղբ. Շանթ Լոճիկեանի) եւ «Յառաջ նահատակ» քայլերգով, որմէ ետք սկաուտները դարձեալ տողանցելով վերադարձան «Ազատամարտ» ակումբ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ 92ԱՄԵԱԿԻ ՄԻՋ-ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄՆԵՐ

Կազմակերպութեամբ «Հայ Սկաուտ» յանձնախումբին, որ կ'ընդգրկէ լիբանանահայ սկաուտական տարբեր շարժումներէ ներկայացուցիչներ (Ս. Գրիգոր Լուսաւորիչ, Ս. Մեսրոպ Անդրանիկ, Հ.Մ.Մ. եւ Հ.Մ.Ը.Մ.) Շաբաթ, 21 Ապրիլ 2007ի երեկոյեան ժամը 7ին, էշրէֆիէի Հայ Կաթողիկէ Պատրիարքարանի «Արարատեան» սրահին մէջ տեղի ունեցաւ Հայկական Ցեղասպանութեան 92ամեակի ոգեկոչման ձեռնարկ մը, մասնակցութեամբ՝ աւելի քան 200 երէց, պարմանուհի եւ խմբապետական կազմերու մաս կազմող սկաուտներու:



յիշատակը վայրկեան մը յոսնկայս լուծեամբ յարգելով:

Ձեռնարկին բացման խօսքը արտասանեց Ս. Գրիգոր Լուսաւորիչ սկաուտական շարժումի խմբապետ Միհրան Այնէճեան, որ անդրադարձաւ ձեռնարկին կարեւորութեան մասին եւ բեմ հրաւրեց օրուան բանախօսը՝ Անդրանիկ Տաքէսեանը:

Օրուան բանախօսը խօսեցաւ թրքական հակահայ արշաւին մասին եւ անդրադարձաւ «Թայմզ» թերթի «Տի Արմինիըն ձեւնոսայտ» վաւերագրական DVDին մասին:

Ձեռնարկը, որ առաջինն էր իբրեւ միջ-միութենական սկաուտական ձեռնարկ, սկսաւ Լիբանանի, Հայաստանի, սկաուտական քայլերգներով եւ 1.5 միլիոն նահատակներու

մին եւ անդրադարձաւ «Թայմզ» թերթի «Տի Արմինիըն ձեւնոսայտ» վաւերագրական DVDին մասին:

DVDին ցուցադրութենէն ետք, բանախօսը հարցադրումներ կատարեց սկաուտներուն եւ պատասխանեց անոնց հարցումներուն:

Ձեռնարկը աւարտեցաւ յուշանուէրներու փոխանակումով եւ յիշեալ DVDէն օրինակներ ներկաներուն բաժնեկրով:



**Sarkis
or
Paul**

SASSOUNIAN INC. **Tools - Supplies - Machines**

Complete Line Of Jewelry Supply

716 S. Olive Street
Los Angeles, CA 90014

Tel: (213) 627-1220
(213) 627-1206
Outside Ca: 1-800-544-4419
Fax: (213) 623-6981

www.sassouniantools.com

E-mail: info@sassouniantools.com

ՀԵԹԻԱԹ

ԾՈՅԼ ԱՂՁԻԿԸ

Պատրաստեց՝ Սալբի Լատոյեան
ՊԷՅՐՈՒԹ

Կար ու չկար, թագաւոր մը կար: Այս թագաւորը օր մը որսորդութեան կ'ելլէ եւ հսկայ թռչուն մը կ'որսայ: Թռչունը կու տայ իր սպասաւորներէն մէկուն, որպէսզի խորովէ...: Քիչ ետք ինչ տեսնէ, թռչունը ամբողջովին այրած ու ածխացած է...:

Ինչո՞ւ միւր այրեցիր, կը բարկանայ թագաւորը սպասաւորին:

Թագաւորն ապրած մնայ... կ'ըսէ սպասաւորը, որ մինչ այդ ապշած կը նայէր միայն մէկ ուղղութեամբ... հո՛ն նայէ... գաւազը փոխանակ եզը իր արօրին լծելու, մայրը լծեր է...:

Թագաւորը կը նայի սպասաւորին ցոյց տուած կողմը, ինքն ալ շատ կը զարմանայ ու անմիջապէս իր մօտ կանչել կու տայ տղան, որ արօրին լծած էր մայրը:

-Չե՞ս ամչնար,- կ'ըսէ,- մայրդ լծած ես արօրին...:

Տղան կը պատասխանէ.- Թագաւորն ապրած մնայ... մենք ժամանակին ունէինք երկու եզ: Օր մը, երբ մայրս հիւանդացաւ, ինձմէ խնդրեց եզներէն մէկը մորթել, որպէսզի անոր միւր ուտէ: Ես ալ ստիպուած կատարեցի խնդրանքը: Հիմա սակայն, երբ վար ու ցանքի ժամանակ

կը հասեր է, մեր դաշտը վարող չկայ, մայրս ըսաւ որ զինքը լծեմ արօրին... ես ալ լծեցի...:

Ամօ՞թ է, ամօ՞թ,- կ'ըսէ թագաւորը տղուն,- մայրդ ազատ արձակէ... ես վայրի

ցուլ մը ունիմ... եթէ կրնաս զինք աշխատանքի վարժեցընել՝ քեզի կու տամ: Ա՛ն, հետդ տար...:

Տղան կ'ընդունի թագաւորին առաջարկը եւ ցուլը բերելով տուն, գոմը կը բանտարկէ: Ոտքերէն եւ փորէն շատ ամուր կը կապէ եւ երեք օր երեք գիշեր անօթի ծարաւ կը պահէ: Յուլը շատ կը խեղճանայ: Երեք օր ետք, տղան կը բերէ թաս մը ջուր, բուռ մը խոտ եւ կու տայ ցուլին: Յետոյ, այդ տկար վիճակին մէջ ցուլը եզան հետ կը լծէ արօրին: Քիչ-քիչ թէ՛ ջուրին, թէ՛ խոտին քանակը կ'աւելցնէ եւ այդ ձեւով ցուլը կը կրթէ: Եզն ու ցուլը կը սկսին դաշտը վարել:



Թագաւորը, որ հետաքրքրուած էր կատղած ցուլին վիճակով, կանչել կու տայ տղան իր մօտ:

Ի՞նչպէս կը լծեցիր ցուլս... կը հարցնէ անոր:

Կը թեցի՛, - կ'ըսէ տղան ուսերը թօթուելով:


Եթէ այդպէս է, կ'ըսէ թագաւորը, ես աղջիկ մը ունիմ, եկո՛ւր քեզի տամ՝ ամուսնացիր հետը: Ի՞մ ծախսերովս հարսնիք կ'ընեմ:



Լա՛ւ, կ'ըսէ տղան եւ թագաւորին աղջկան հետ ամուսնանալով զայն իր տունը կը տանի:

(Շար. 1)





ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻՆ

Արջերը կը պատկանին ստնաւոր կենդանիներու շարքին: Անոնք մսակեր կենդանիներ են: Արջերու հասակը կը հասնի 2.5 մեթրի, իսկ կշիռը՝ 225-325 քկ-ի:

Արջերը կ'ապրին մինչեւ 30 տարեկան: Անոնք ծառ շատ լաւ կը մագլցին: Արջերուն գոյնը կ'ըլլայ սրճագոյն կամ մոխրագոյն: Կ'ուսնեան հսկայ թաթեր եւ երկար եղունգներ, ինչպէս նաեւ՝ սուր ակուաններ:

Աչնան, արջերը կը պատրաստեն իրենց ապաստանը՝ ժայռերու մէջ, որպէսզի պաշտպանուին ցուրտէն:

Արջերը կ'ուտեն ձուկի տեսակներ, եղջերու, ոչխար եւ կով: Անոնք շատ կը սիրեն ուտել մեղր, քաղցր պտուղներ եւ ընկոյզ:

Արջերը կը սիրեն ճաշէն ետք երկննալ գետին եզերքը:

Արջերուն մուշտակը շատ փնտուած է, անոր համար անոնք որսորդներու կողմէ հալածուած կենդանիներ են եւ անոնց թիւը կը պակսի տարուէ տարի:



ԱՐՋԵՐԸ

Ի՞ՆՉ ԿԸ ՓԱՓԱՔԻՄ ԸԼԼԱԼ ԱՊԱԳԱՅԻՆ



ԼՐԱԳՐՈՂ

պէսզի ընթերցողին ուշադրութիւնը գրաւէ:

Լրագրող մը նկարագիրով պէտք է ըլլայ հետաքրքրասէր, գրելու եւ շարադրելու ճիրք ունեցող եւ գիտելիքներով լեցուն:

Լրագրողը կ'աշխատի թերթի, ձայնասփիւռի կամ պատկերասփիւռի կայանի մէջ:

Լրագրողը հարցախոյզներով, հարցազրոյցներով, տեղեկատուական յօդուածներով եւ պրպտումներով տեղեկութիւններ կը հաւաքէ: Ան կը ստուգէ այդ տեղեկութիւնները եթէ ճիշդ են, ապա կը շարագրէ եւ կը ներկայացնէ գանոնք ժողովուրդին: Իւրաքանչիւր լրագրող կ'ունենայ իրեն յատուկ ոճը, որ պէտք է հետաքրքրական ըլլայ, որ-



ՀԱՆՇԵԼՈՒԿ

Ո՞վ է, ի՞նչ է:
Փայտէ մարմին, մագոտ գլուխ:

(Պատասխանը՝ յաջորդիւ: Նախորդ հանելուկին պատասխանն էր քգեմի):





Էլի Հուլիշեան

«ՄԱՐԶԻԿ»Ի «ՔԱԶԱԼԵՐ ԱՆԴԱՄ»ՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան որոշումով, երեք տարիէ ի վեր հաստատուած է «Մարզիկ»ի «Քաջալեր անդամ»ներու դրոշմը: Թերթին «Քաջալեր անդամ» կը նկատուին բոլոր անոնք, որոնք տարեկան 200 եւ աւելի ամերիկեան տոլար կը նուիրեն անոր բարգաւաճման ծրագիրներուն:

«Քաջալեր անդամ»ներու անունները կը հրատարակուին թերթին յաջորդական 12 թիւերուն մէջ:
«Մարզիկ»ի «Քաջալեր անդամ»ներ են.-

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԷՆ Ազատուիի Դանիէլեան, Վահրամ Դանիէլեան, Լեւոն եւ Թագուիի Փալեաններ, Պետո եւ Սիրան Տէր Պետրոսեաններ, Զարեհ Գարակիւլիէան, Յակոբ Թոքաթլեան, Վալգէն Լախոյեան եւ Կարպիս Պարսումեան:

ԳԱՆԱՏԱՅԷՆ Վաղարշ Էհրամճեան, Արթո Մարգարեան, Անահիտ Մարգարեան, Տիգրան Հաճէթեան, Լեւոն Մելքոնեան, Հրանդ Տէտէեան, Արթին Մաժակեան, Արա Իմամէճեան, Պետրոս Պաքրրճեան, Բարգէն Կարապետեան, Լեւոն Նաճարեան եւ Կարապետ Ն. Թոփճեան:


ՅՈՐԴԱՆԱՆԷՆ ձորճ Տաթէսեան:

www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org
www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org www.homenetmen.org

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ

1. Շաւարշ Քրիսեանի հրատարակած մարզաթերթը:
2. Զինկախառն պղինձ - Վաճառանիւթ:
3. Ետին դարձած՝ օտար տղայ - Վերտիի օփերա-ներէն - Արեւու ջերմութիւն:
4. Զքանալ, ոչնչանալ - Պարտիզականի գործիք:
5. Հերկ, երկրագործի գործերէն - Միւս:
6. Հայկական ամիսներու ԺՁ. օրը - Ռուբէն Որբերեանի ծննդավայրը:
7. Իգական օտար անուն - Իւրացո՛ւր - Հոյլ:
8. Բազմաթիւ - Ճանկ - Յուցական ածական:
9. Մեղմ հով - «Ֆորմիլա 1»ի բրիտանացի մրցավարորդ:
10. Աքաղաղի կարթ - Յոյն դիցուհի - Դրկից գիւրեր:
11. Այլըրոտ միջուկով քաղցր պտուղ - Ափրիկեան երկիր - Փաքիստանի քաղաքներէն:
12. Որոշ տեսակի նուազարաններու վերաբերեալ - Յարաբերական դերանուն:
13. Տարի - Չայնանիչ - Նմանաձայն տառեր - Ողիմպիական «դեղին» ցամաքամասը:
14. Զեռք - Չայնակից գիրեր - Սիամանթոյի ծըննդավայրը:
15. Իսլամ կրօնաւոր - Լիբանանի գետերէն - Կրկնուած բաղաձայններ:
16. Չայնանիչ - Ազդը - Լեզուով մը՝ այո՛ - Կրկնուած ձայնաւորներ:
17. Երկամունք - Մախաթ, մատասեղ:
18. Իգաբարոյ - Ալեքս Ֆերկլսընի տրուած տիտղոսը - Հրանիւթ:
19. Ածականակերտ մասնիկ - Բազմութիւն - Նըլաստ - Այբուբենէն:
20. Յնձութիւն - Թաղանթ - Իրերայաջորդ տառեր - Տարիք:


1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15



ՈՒՂՂԱՀԱՅԵԱՅ


1. «Եու-է-էֆ-Ա.»ի ֆրանսացի նախագահը - Չարայուչութիւն:
2. Յորդանոս - Անուշահոտ փոքր սեխ - Յոփ:
3. Յիմարօրէն, առանց մտածելու - Հայաստանի քաղաքներէն:
4. Ճահճատենդ - Մէկուն դէմ չարիք նիւթել - Թիթիսոր:
5. Հայաստանի հնավայրերէն - Շարունակ - Իգական օտար անուն:
6. Ժամանակի միաւոր - Արգելական - Վաչտ - Կրկնուած բաղաձայններ:
7. Դրկից գիրեր - Ջրային գազան - Չայնանիչ:
8. Դաշոյն - Կերածը իւրացնել - Պելճիքայի թեմիսովումըն՝ Քիմ:
9. Պնդագլուխ - Կատարեցի - Կարմիր ներկ տուող բուսարմատ:
10. Իգական օտար անուն - Հեռացի՛ր:
11. Յետոյ - Ջրային վայելչակազմ թուչուն - Պարտք:
12. Կրկնուած բաղաձայններ - Գ. Սունուկեանի թատրերգութիւններէն - 1998ի Ողիմպիականները հիւրընկալած քաղաքը:
13. Ուրոյն - Վանայ լիճի կղզիներէն - Զիւնախառն քամի - Շողկապ:
14. Նկարչական կարմիր ներկ - Նապաստակի տեսակ - Վերջ:
15. Անօթութեան նուաղիլ - Հերհեր - Ծառաչատ տարածութիւն - Էական բայէն:

ԹԻՒ 161 ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ



ԼՈՅՍ ՏԵՍԱԻ «ՄԱՐՉԻԿ»Ի ԽՄԲԱԳՐԱԿԱՆՆԵՐՈՒ Բ. ՀԱՏՈՐԸ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախաձեռնութեամբ, Յունիսին, Պէյրութի մէջ լոյս տեսաւ «Մարչիկ»ի խմբագրականներու Բ. հատորը, որ իբրեւ Ա. հատորի շարունակութիւն, կը ներկայացնէ թերթին 103րդ թիւէն (Թ. տարի թիւ 7, 1990 Յուլիս) մինչեւ 294րդ թիւը (ԻԵ. տարի տարի, թիւ 12, 2006 Դեկտ.) երկարող 124 խմբագրականներու հասկաքաղ մը:



Հատորը ընթերցողին կը ներկայանայ եղբ. Վիգէն Աւագեանի խմբագրութեամբ եւ հաւատաւոր երեք Հ.Մ.Ը.Մ.ականներու՝ եղբայրներ ձորձ Տաքէսեանի, Սարգիս Տէր Պետրոսեանի եւ Յովհաննէս Մարտոյեանի մեկենասութեամբ:

Իբրեւ նախաբան, հատորին սկիզբը կը ներկայացուի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական, Վարչութեան «Այս հատորը» խորագրեալ խօսքը, որուն կը յաջորդէ «Մատենագիտական ծանօթութիւն» բաժինը: Հուսկ, 264 էջերու վրայ տեղ կը գտնեն խմբագրականները:

Ստորեւ՝ հատորը ներկայացնող Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան խօսքը:

«Մարչիկ» պաշտօնաթերթի խմբագրականները առանձին հատորով մը ներկայացնելու գաղափարը նոր չէ: 1990ին, Հ.Մ.Ը.Մ.ի օրուան Կեդրոնական Վարչութիւնը ողջունելի գաղափարը ունեցաւ միութեան «Գաղափարախօսութիւնը տարասփռող, Հաւատքն ու Այգային Դաւանանքը քարոզող, Ծրագրին ու Կանոնագրին էատարրերը բացատրող, անգիր կանոնագիր՝ միութենական աւանդութիւնները աւանդող եւ սկառուտական ու մարդկական գործով իր հետապնդած՝ «Հայրենիքէն դուրս, Հայրենիքին համար» վախճանական նպատակը առաջադրող» «Մարչիկ»ի խմբագրականները մէկտեղել եւ գիրքով մը տպել, իբրեւ միութենական առողջ դաստիարակութեան ծառայող հրատարակութիւն:

1990էն առդին անցած են 17 տարիներ եւ «Մարչիկ» կտրած է բաւական երկար ճամբայ՝ շեփորահարը մնալով արժէքներու, որոնք ո՛չ ժամանակ կը ճանչնան, ո՛չ ալ աշխարհագրական սահման: Կու գան հինէն, բայց չեն հիննար, կ'երթան ապագային, ու չեն աժաննար:

«Մարչիկ», ինչպէս միութենական որեւէ պաշտօնաթերթ, Հ.Մ.Ը.Մ.ի համար գրաւոր հաղորդակցութեան միջոց մը ըլլալէն շատ աւելին է: Սոսկ տպուած թուղթ մը չէ ան, այլ՝ ունի նկարագիր եւ կեցումօք, առաքելութիւն եւ յանձնառութիւն, որոնք ամէնէն աւելի կ'արտացոլան իր խմբագրական էջերուն ընդմէջէն: Էջեր, որոնք չեն խամրիր ժամանակի ուժին չդիմացող թուղթերուն հետ: Ընդհակառակն, իբրեւ գաղափարի եւ ոգիի ջերմութեամբ լիացած գրութիւններ, կենդանութեան խորհուրդով կը շնչաւորեն նոյնիսկ դեղնած ու չորցած աշնանային թերթերը՝ դառնալով գարնանային կենդանութիւն եւ վարակիչ շունչ:

Հ.Մ.Ը.Մ.ի նման միութիւններ, որոնք յաճախ նիւթական իրենց աղբիւրներուն պակասն ալ ստիպուած են փոխարինելու գաղափարական հարստութեամբ, ժամանակի մաշեցրնող ժանգին կրնան դիմանալ առաւելաբար իրենց խոհայններով ու բարոյական արժէքներով, որոնց պահպանման ու վարգացման լաւագոյն տեղը խմբագրական էջերն են:

Հ.Մ.Ը.Մ.ի վարագային, միութեան գաղափարական գանձարանը հարստացնող խմբագրականները ունին նաեւ այգային ինքնաճանաչումի, հայակերտումի եւ հայապահպանումի կարելոր թելադրականութիւն, համաշխարհայնացումի, այլասերումի եւ խելայեղ նիւթապաշտութեան ներկայ հոսանքներուն դէմ:

Հետեւաբար, բնական էր շարունակել 1990ին սկսուած գործը եւ խմբագրականներու Ա. հատորին փորձառութենէն քաջալերուած՝ ձեռնարկել ներկայ հատորին պատրաստութեան, գրադարաններու մէջ ցրուած հաւաքածոներէ հաւաքելով եւ ընթերցողին անմիջական տրամադրութեան տակ դնելով թերթին անցնող 17 տարիներու գաղափարական ուղի ճշող խմբագրականները: Շատեր այդ խմբագրականները օրին կրնան կարդացած ըլլալ եւ մոռցած: Ուրիշներ վանոնք պիտի կարդան առաջին անգամ ըլլալով: Կ'արժէ կարդալ բոլորը եւ լաւ ճանչնալ մեր ուժին աղբիւրը հանդիսացող հաւատքի եւ նուիրումի այն արժէքները, որոնցմով դրօշաբար պիտի շարունակուի:

Դրօշաբար Հ.Մ.Ը.Մ.ին:

Հաւատքի վազքը ճակատագրի դէմ յաղթանակին, Հ.Մ.Ը.Մ.ի ճամբով հայութեան նոր կեանք ու նոր հորիզոններ կերտելու վեհ ձգտումին:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



HOMMELTMEIN

SYRIA



Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՄԼԷՂԻ ՊԱՍՔԵԹՈՂԱՍԻ

Sponsored by:



ՏՂԱՅ ՈՒ ԱՂՋԿԱՆՅ ԽՈՒՄԲԵՐԸ

WWW.LEZACO.COM